партии НКАО все советские знамена. Все это делается с Вашего позволения, с позволения Горбачева! Кто будет отвечать за погромы людей, за блокаду Армении и НКАО, за демонтаж советских южных границ и другие злодеяния! Вы обязаны начать "Нюрнбергский процесс" над организаторами Бакинских вакханалий в январе месяце, выяснить подробную причину заранее подготовленной провокации. Как можно предать забвению вандализм бакинских головорезов-пантюркистов! Как можно ежедневно видеть жалкие лица "бродяг эпохи развитого социализма" Союза ССР. Кто должен отвечать за подлые злодеяния? Ответ однозначен – Президент Горбачев! На международной арене за похороны социализма готовы поставить золотой памятник Горбачеву, допустившему ошибку за ошибкой в межнациональных отношениях. Армения вследствие позорной блокады потеряла сотни миллиардов рублей! Кто дал право отщепенцам ислама перекрыть газопровод, идущий из России в Армению. И это специально делается после столь ужасного землетрясения! Если бы Вы и Президент Горбачев поступили справедливо, то не случились бы подобные злодеяния против человечества. Чаша терпения армянского народа переполнена. Пока не поздно - опомнитесь! В противном случае, армянский народ может защитить себя, у нас множество сочувствующих и друзей во всем мире! Нагорный Карабах в обязательном порядке должен выходить из состава Азербайджана! Я надеюсь, Вы возмете на себя смелость и подскажете Президенту: "Хватит, Михаил Сергеевич, дальше так нельзя, нужно применять неотложные меры, надо справедливо потушить этот пожар!

Искренне

Григор Месропович Григорян,

Член КПСС, доктор ист. наук, профессор

15.6. 1991

Адрес: 375025, Ереван, Чаренца, 15

25.

МОСКВА, ПРЕДСЕДАТЕЛЮ ВЕРХОВНОГО СОВЕТА РСФСР ТОВ. ЕЛЬЦИНУ Б. Н. И ВСЕМ НАРОДНЫМ ДЕПУТАТАМ!

Уважаемые товарищи!

Президент Горбачев и его идейный соратник Муталибов-организатор кровавых оргий в Баку руками русских обманутых военачальников и солдат, продолжают варварскую акцию депортации коренных жителей-армян из Азербайджана. Это потому, что Армения, в том числе и НКАО всегда были и останутся с Россией. Азербайджанские ОМОНовцы убивают мирных жителей, детей! Подымите же ваш голос и остановите резню. Я предлагаю депортировать из Москвы защитника пантюркистов Генсека партии, чтобы на своей шкуре он почувствовал, что такое депортация народа! В эти тревожные дни я обращаюсь к россиянам с просьбой оказать содействие в мирном разрешении карабахского вопроса. Поднимите вопрос об импичменте президента М.Горбачева. Президент великого государства должен быть честным, порядочным и объективным человеком, а не зачинщиком террора против советских народов!

С уважением
Григор Месропович Григорян, д.и. н., профессор,
уроженец России

5.5. 1992
375025, Ереван, Чаренца, 15

26.

НАРОДНОМУ ДЕПУТАТУ РОССИИ, ГЕНЕРАЛ-ПОЛКОВНИКУ, ДОКТОРУ ИСТОРИЧЕСКИХ НАУК ТОВ. ВОЛКОГОНОВУ Д. А.

Глубокоуважаемый профессор!

Я знаю, сегодня Вы очень заняты громадной работой формирования российской армии. Россия, как и другие республики бывшего Союза переживает тяжелые дни самоочищения. Однако ряд лидеров тюркоязычных республик и автономий, пользуясь нестабильной обстановкой в обществе, по указанию мусульманских идеологов извне стремятся раздробить Великую Россию на мелкие клочки полуфеодальных образований. Очень жаль, что в результате близорукой политики некоторых высокопоставленных чиновников российского правительства политический вакуум в юго-восточном регионе страны постепенно восполняет Турция, которую лидеры этих республик уже называют "старшим братом", идя на поклон в Анкару. И удивительно, что Москва не желает видеть "бархатные преобразования", консолидирующие тюркоязычные нации на пути процесса создания великой Туранской империи.

Как заинтересованная сторона в этом геополитическом пространстве, Иран занимает более умеренную позицию, хотя за сферу влияния между индоевропейским соседом и "советской" Турцией ныне идет молчаливая, но ощутимая борьба. Пользуясь нейтральной позицией России в Карабахском вопросе, эти государства стремятся быть посредниками между Арменией и Азербайджаном за "Яблоко раздора" - Карабах. Армении, в данном случае, импонируют позитивные шаги иранской стороны, поскольку Турция давно разоблачила себя своей гнусной политикой

относительно других народов. Об этом еще не забыли армяне, греки, болгары, а также курды, лезгины, таты, удины и другие нац. меньшинства. Не чувствуют ли российские политики, что частые визиты турецких лидеров в среднеазиатские республики и Азербайджан имеют определенные цели перспективной направленности. А Армения по своему географическому расположению им мешает. Они знают, что республика Армения ныне является единственным верным союзником и соратником России на юге, чего не хотят понимать российские лидеры внешнеполитического ведомства. Я уж не говорю о Карабахе, который на основании Гюлистанского мирного договора (12 октября 1813 года) между Россией и Персией является составной частью Российского государства. Никто поныне не аннулировал этот договор. И в наши дни жители Гюлистана (ныне Шаумяновск) со всеми коренными жителями Карабаха, на этот раз с оружием в руках,ведут борьбу против пришельцев в 18-ом веке из среднеазиатских степей кочевых племен турок-азеров (турецкий премьер Демирель, будучи в Ташкенте, признался, что приехал на родину своих предков), а российский центр молчит и не оказывает малейшей поддержки борющемуся своему народу.

Как Вы знаете, по велению трижды проклятого случайного президента Горбачева русские черные полковники за 30 серебренников продали свои души мамоне и под диктовку азербайджанских пантюркистов депортировали все армянское население из 24-х сел Арцахской земли! Был бы жив великий А. Суворов, он строго наказал бы всех авторов и исполнителей кровавой операции "Кольцо", которые совершали свои злодеяния на родине его любимой матери-армянки. Вместе с Пуго и Язовым, должны нести наказание Ю.Шаталин, Б.Громов и другие горбачевские ставленники генералитета, которые не знают сколько пролито русской крови на Карабахской земле при освобождении этого края от мусульманских полчищ. Они хотя бы вспомнили слова императора

Александра 1-го о том, что народы закавказских областей, в том числе и карабахские армяне, желают воссоединиться с Россией, и было бы совершенно несправедливо не исполнить их желание. Актуальные слова! И что же теперь получается. 200-тысячное армянское население Нагорно-Карабахской Республики желает временно воссоединиться с Россией, а продажные русские военачальники за какие-то подаяния умело организовывают в Азербайджане траги-комические сцены похищения складных боеприпасов, вертолетов, самолетов, танков, БТР-ов и т. д. Невольно хочется верить, что они выполняют приказы турецкого военного командования, которое и без того оснащает азербайджанскую армию и другие регионы бывшего Союза современным оружием массового поражения. Об этом, вероятно, знает и шеф российской контрразведки академик Е.Примаков.

Очень обидно, что наши современные военачальники не имеют малейшего представления о древних связях армянского и русского народов, об их совместной борьбе против чужеземных захватчиков. Но обязаны были знать, что еще при татаро-монгольском нашествии армянские ополченцы были в составе русских войск, во время Отечественной войны 1812 г. против Наполеона Бонапарта сражались многие карабахские армяне, среди которых особенно отличились генералы П.Меликов - любимец М.Кутузова, П.Айрапетов, историк, генерал Д.Ашхарумов, братья Абакумовы (Давид, Петр, Александр), Лазаревы, Лалаевы, братья Бейбутовы, Мелик-Осипов...В войнах против Турции прославились генералы А.Тер-Гукасов, П.Лорис-Меликов, адмирал флота М.Серебряков, сын которого, капитан-лейтенант, погиб при штурме на руках Нахимова.

В Бородинской битве храбро сражались сыны Армении-военачальники Вардапетян, Агамфаров, Туманов, Аргутинский, Сумбатов, Шелковников, Дельянов, Каспаров, Абрамов, Асланян и многие другие. Русские воины гордились мужеством своего

командира - карабахского уроженца, генерала Валериана Мадатова, особенно при Лейпцигской битве.

На Смоленском кладбище Санкт-Петербурга покоятся многие участники Бородинской битвы. Привлекла мое внимание надгробная надпись 33-летнего армянина - штабс-капитана Заала Пираляна, где на армянском, русском и грузинском языках высечено:

"ИМЪ ЖЕ ОБРАЗОМЪ ЖЕЛАЕТЪ ЕЛЕНЪ НА ИСТОЧНИКИ ВОДНЫЯ, СИ ЦЕ ЖЕ ЖЕЛАЕТЪ ДУША МОЯ КЪ ТЕБЪ БОЖЕ. В 1812 –МЪ ГОДУ БЫЛЪ ВЪ РАЗНЫХЪ СТРАЖЕНИЯХЪ ПРОТИВЪ ВРАГОВЪ ОТЕЧЕСТВА, РАНЕНЪ ПУЛЕЮ ПОДЪ БОРОДИНЫМЪ И ТОЙ СКОНЧАЛСЯ..."

...Ныне каждый божьи день в Карабахе льется кровь невинных людей: гибнут голодные дети, старики и женщины-патриотки, о которых восхищенно писал историк В. Потто. И обидно, что в дни испытаний русско-армянской дружбы руководство России так безразлично и хладнокровно смотрит на геноцид армян в Карабахе! И кроме передовой части русской интеллигенции, официальные круги не говорят: "Россияне, да там же гибнут наши испытанные и верные друзья – армяне..."!

Дабы не обидеть турецких лидеров и азербайджанских шовинистов, российское руководство вынужденно (?) держит позу нейтралитета и невмешательства, довольствуясь лишь каждодневными сводками боевых операций: "убито столько, ранено столько, подбито, разрушено..." Кому нужно подобное безразличие, притом тогда, когда командиры армейских подразделений СНГ дарят азербайджанским бандформированиям не только бронетехнику, но и корабли Каспийской флотилии. Это безумие, самоубийство в полном смысле слова!

Более 4-х лет Армения, в том числе и Карабах, находятся в блокаде. На железнодорожных станциях Азербайджана стоят ограбленные вагоны с продовольствием и промышленными товарами для зоны землетрясения. И никто не хочет наказать этих

грабителей и воров. Когда же же, наконец, Президент России Б.Н.Ельцин, который пользуется большим авторитетом в Армении, должен сказать свое веское слово бакинским властям: " Хватит, убирайтесь вон из Карабаха и дайте покою народу!" И можете не сомневаться, немедленно прекратились бы боевые действия на этой земле, а организаторы погромов советско-иранской границы, убийцы из Баку, Сумгаита, Кировабада бесповоротно убрались бы как паленные кошки и никогда не подняли бы свою кровавую руку на Карабах –родину советских славных военачальников - И.Баграмяна, А.Бабаджаняна, Худякова-Хамферянца, И. Исакова и более 20-ти Героев Советского Союза. И было бы совершенно справедливо, на основании норм и прав общечеловеческих идеалов самоопределения народов, временно принять Нагорно-Карабахскую Республику в состав Российской Федерации.

Думаю, ныне это единственный путь разрешения Карабахской проблемы. В противном же случае карабахцы полны решимости бороться до конца, до последней капли крови!

Ведь история повторяется!

С глубоким уважением,
Григор Месропович Григорян,
сотрудник АН Армении,
доктор исторических наук, профессор.

4. 5. 1992
375025, Ереван, ул.Чаренца, 15

27.

ВИЦЕ-ПРЕЗИДЕНТУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ ГЕНЕРАЛУ РУЦКОМУ А. В.

Уважаемый Александр Владимирович!

Ворованные в Азербайджане из складов ряда подразделений СНГ оружие и бронетехнику азербайджанские убийцы применяют против мирных жителей Нагорного Карабаха и приграничных районов Армении. Я думаю, Вы откроете судебный процесс против погромщиков военных складов в Мингечауре, Агдаме и других местах Азербайджана и строго накажите командиров подразделений, "даривших" современное вооружение банд. формированиям. Азербайджан и без того из Турции получает военную технику и военных инструкторов.

Поймите, пожалуйста, в конечном счете все это направлено против России и русского народа, о чем говорим шопотом. Возможно, об этом знает шеф российской контрразведки акад. Е.Примаков! Меня в эти тревожные дни волнует и другой вопрос: как чувствуют себя в Москве авторы позорной операции "Кольцо", в результате чего были депортированы из 24-х сел Карабахской земли ничем не повинные мирные жители. Не мучает ли совесть генералов Ю.Шаталина и Б.Громова за свои злодеяния в этом древнеармянском краю. Кто им давал такой подлый приказ о депортации коренных жителей Геташена, Мартунашена и других армянских поселений. Если они уважают честь мундира, то обязаны вернуть обратно в свои очаги бывших жителей этого христианского края и попросить извинения у народа за свои злодеяния. Тем самым, возможно, они очистят свои души от караемого греха. Они обязаны отобрать от азербайджанцев всю бронетехнику и боеприпасы, танки, установки " Град", БТР-ы и артиллерию...

Армения была и остается верным другом России!

Григор Месропович Григорян

Доктор исторических наук, профессор

6.5. 1992

375025, Ереван, Чаренца, 15

28.

МОСКВА, ВИЦЕ-ПРЕЗИДЕНТУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ ТОВ. РУЦКОМУ А. В.

Уважаемый Александр Владимирович!

18 июня по телевидению я смотрел передачу о Вашей встрече с представителями прессы. Мне понравились Ваши взвешенные ответы на вопросы корреспондента радиостанции "Свобода" Дм.Волчака о "горячих точках" страны. К сожалению, Вы забыли упомянуть и Нагорный Карабах, где фактически азербайджанское руководство также ведет политику геноцида армянского населения этого края не без участия Турции и некоторых продажных русских военачальников 4-ой армии (23-ей мотострелковой дивизии).

Если в настоящее время Россия ведет политику нейтралитета, то почему танки и вертолеты российской армии участвуют на стороне Азербайджана! Неужели Вы и главнокомандующий войсками СНГ Е.Шапошников не видите, что помогая Азербайджану против Армении, тем самым ослабляете мощь России против Турции. Ведь Армения, я говорю уверенно, единственная республика, которая защищает на юге интересы России. Не забудьте, что мы окружены исламским миром, уважаемый генерал!

Искренне

Григор Месропович Григорян,

уроженец России, д.и.н. профессор,

сотрудник АН Арм.ССР

20. 6. 1992

375025, Ереван, Чаренца, 15

29.

ГЛАВНОМУ РЕДАКТОРУ ГАЗЕТЫ "АРГУМЕНТЫ И ФАКТЫ" ТОВ. СТАРКОВУ В. А.

Прошу Вас ответить на нижеследующие вопросы:

1. Кто должен, наконец-то, отвечать за убийства и погромы в Азербайджане нетюркоязычного населения – армян, русских и других. Долго ли мы будем молчать, не краснея от стыда и позора?
2. Кто несет ответственность за демонтаж и бесчинства на южной границе СССР-Иран? Только НФ Азербайджана, их покровители или же...?
3. Несет ли лидер нашей партии и государства ответственность за беспрецедентные фашистские бесчинства на границе?
4. Может ли долго продержаться демократия под дулами пистолетов, как, например, в городе Степанакерте НКАО, если иметь ввиду то обстоятельство, что флаг Азербайджана поднят над пустующим зданием обкома партии области?
5. Может ли министр внутренних дел тов. Бакатин строго наказать коменданта чрезвычайного положения генерала Сафонова за варварское отношение к местному армянскому населению, за закрытие газеты "Советский Карабах" или телепередач на армянском языке?
6. Чем Вы можете объяснить проазербайджанскую политику неизбранного всем советским народом президента М.С.Горбачева?
7. Что такое самоопределение народов и в чем оно выражается?

8. Если две Германии, как отдельные государства, желают воссоединяться и наше руководство это считает вполне нормальным явлением, то на каком основании оно сопротивляется воссоединению двух частей армянского народа – Армянской ССР и НКАО?

Если возможно, ответы на эти вопросы на печатайте в Вашей газете, а если нет, то их пришлите обратно по адресу:

375025, Ереван, Ул.Чаренца, 15, Институт археологии и этнографии АН Армянской ССР - Григоряну Григору Месроповичу.

ՆԱՄԱԿՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

* *Թարգմանությունները տրվում են նույն հերթականությամբ (հեղ.):*

1.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, ԸՆԿ. Մ.Ս. ԳՈՐԲԱՉԵՎԻՆ

Հարգելի Միխայիլ Սերգեևիչ.

Մեծն Ալեքսանդր Մակեդոնացին դատավարությունների ժամանակ սովորաբար փակում էր մեկ ականջը, որպեսզի մյուսով լսի հակառակ կողմին: Ինչպե՞ս Դուք կարող էիք թույլատրել Կենտրոնական հեռուստատեսությամբ ելույթ ունենալ ադրբեջանական մարդասպան «գրողին» Բաքվում և Ադրբեջանի այլևայլ վայրերում տեղի ունեցած խժդժություններից հետո: Ո՞ւմ է պետք այս էժանագին տրագի-կոմեդիան, երբ մինչև օրս շրջափակման մեջ են գտնվում Խորհրդային Հայաստանը և ԼՂ Ինքնավար Մարզը, երբ ինչ-որ մեկի կամքով ատրճանակների և քնդանոթների փողերի տակ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի դատարկ շենքի վրա բարձրացվել է «ինտերնացիոնալ» Ադրբեջանի դրոշը: Դուք ինչ է, Միխայիլ Սերգեևիչ, դարձյա՞լ հավատում եք պանթուրքական-պրովոկատորներին, որոնք քարուքանդ արեցին մեր հայրենիքի սրբազան սահմանները:

Ձեզ կոչ եմ անում խելամտության:

Հարգանքով
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
ՍՄԿԿ անդամ 1960 թ., պատմ.գիտ. դոկտոր

27.5. 1988
375025, Երևան, Չարենցի 15

2.

ՀԱՄԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ՄԻՐՈՆԵՆԿՈՅԻՆ «ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱՅԻ» ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻՆ

Հարգելի ընկերներ.

Պետք է խոստովանեմ, որ ես շատ եմ սիրում մեր «Կոմսոմոլկան»՝ խորհրդային երիտասարդության համարձակ, սկզբունքային և ջանադիր մամուլը: Բաժանորդագրվում եմ ամեն տարի, կարդում եմ հաճույքով: Չեմ թաքցնում, այսօր ես շատ հուզված եմ ահա թե ինչու.

1988 թ. հուլիսի 15-ին «Կոմսոմոլսկայա պրավդայի» էջերում «Տունը ընդհանուր տանիքի տակ» խորագրով տպագրվել է Ձեր աշխատակից Ռ.Հուսեյնովի «Խորհրդածությունները» «Լեռնային Ղարաբաղի և նրա շրջակայքի իրադարձությունների մասին»: Այդ հոդվածում աղավաղված է Հայկական ԽՍՀ-ում ժողովրդավարական բարեփոխումների էությունը: Նշենք, որ հեղինակը կատարյալ արդարությամբ հարցնում է՝ «Ինչպե՞ս կարող է մեր օրերում արյուն հեղվել»: Կարծում էի, որ նա կձգտի պարզաբանել Ադրբեջանում կատարված արյունահեղության պատճառները, սակայն հեղինակը գրում է լոկ այն մասին, թե ինչպես Լեռնային Ղարաբաղի մարզկոմի նախկին քարտուղար Կևորկովն «ինքն էր որոշում, թե որտեղ էր տեղավորելու հյուրերին»:Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցերը, Հուսեյնովի պարզամիտ կարծիքով «ժամանակավոր կուրություն է» և հույս ունի, որ «բանականությունը բոլոր դեպքերում կհաղթանակի զգացմունքներին»: Հոդվածի հեղինակին անկեղծորեն գրգռում է խորհրդային հայտնի տնտեսագետի (նկատի ունի ակադեմիկոս Ա. Գ. Աղանբեկյանին) « ոչ իրավասու» հայտարարությունը, որը ֆրանսիական «Յումանիտե» թերթին տված հարցազրույցում արտահայտել էր այն միտքը, թե նպատակահարմար է Լեռնային Ղարաբաղը միավորել

Հայաստանի հետ: Հուսեյնովը, հավանաբար, գիտի, որ ակադեմիկոս Ա.Աղանբեկյանը քայլում է վերակառուցողների կողմնակիցների առաջին շարքերում: Նա ելույթ է ունեցել նաև ձեր թերթում:

Ռ.Հուսեյնովի կարծիքով, «այն, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղի շուրջը, հարված է վերակառուցմանը, հնարավոր է՝ ամենալուրջը վերջին ժամանակներում»: Նման դատարկահունչ հայտարարությունը, մեղմ ասած՝ բամբասանք է: Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին այնտեղի հիմնահարցերի իրական պատկերը, որոնք ծագել են ստալինյան դեսպոտիզմի շրջանում և բրեժնևյան լճացման ժամանակներում: ԼՂԻՄ-ի բնակչությունը առաջինն զգաց վերակառուցման թարմ շունչը և համարձակորեն օգտվեց դրանից: Ինչպես հայտնի է, 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ աշխատավորների պատգամավորների մարզխորհուրդը կուսակցության մարզկոմի համաձայնությամբ ընդունել է որոշում Ադրբ. ԽՍՀ-ից դուրս գալու և Հայկ. ԽՍՀ-ին միավորվելու առթիվ՝ ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածի հիման վրա: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը իր համաձայնությունը տվեց ԼՂԻՄ-ը Հայկ. ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու կապակցությամբ (15.6.1988): Ամեն ինչ կատարվեց օրենքի սահմաններում, Խորհրդային Միության Սահմանադրության շրջանակներում: Մենք ընկ. Հուսեյնովի հետ պետք է ուրախանայինք, որ նման փաստը հանդիսանում էր մեր հասարակության դեմոկրատացման, նոր մտածողության արդյունք, և այն բոլորովին չէր նշանակում գնալ «վերակառուցման նոր գաղափարների դեմ», ինչպես սխալմամբ կարծում է ընկ. Հուսեյնովը: Մի շարք հեղինակներ, ընդ որում նաև ընկ. Հուսեյնովը, խորամանկորեն հարցնում են՝ «Ո՞ւմ է դա ձեռնտու»: Պատասխանը միանշանակ է. ԼՂԻՄ-ի աշխատավոր լայն զանգվածներին, որոնք ցանկանում են միավորվել ոչ թե կապիտալիստական երկրի, այլ՝ Խորհրդային հանրապետության հետ, ուր ապրում է նույն էթնոսը, նույն ժողովուրդն՝ իր հոգեկան կերտվածքով և դարավոր ավանդույթներով: Միևնույն ժողովրդի արհեստական բաժանումը բարոյական չէ: Դա հակասում է սովետական հումանիզմի տարրական

սկզբունքներին, մեր սահմանադրության բուն ոգուն: Տեղին է ընկ. Հուսեյնովին հարցնել՝ ի՞նչ կապ ունեն ԼՂԻՄ-ի գործադուլները կամ Երևանում տեղի ունեցած դեմոնստրացույցերը կապիտալիստական երկրների համանման երևույթների հետ, ուր, Ձեր լրագրողի խոսքերով ասած՝ «փորձ կա դեմոնստրացույցերը ցրելու ռետինե գնդակների օգնությամբ» կամ «արցունքաբեր գազի» միջոցով: Արդյոք ընկ. Հուսեյնովը չի՞ առաջարկում կապիտալիստական երկրներից ընդօրինակել «ցույցերը ցրելու» նրանց եղանակը: Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ «ՍՄԿԿ ԿԿ 19-րդ համամիութենական պարտ. կոնֆերանսի հիմնադրույթները», ուր մասնավորապես ասված է սովետական ժողովրդի սահմանադրական իրավունքների (խոսքի, մամուլի, ժողովների, միտինգների, փողոցային երթերի և շքերթների, խղճի ազատության) մասին:

Ստացվում է, որ խորհրդային մամուլի ներկայացուցիչը գաղափար չունի մեր ժողովրդի տարրական իրավունքների վերաբերյալ, այլապես չէր դիմի «սովետական իշխանության օրգաններին, իրավապահ ծառայություններին» սովետական մարդկանց խաղաղ շքերթները ցրելու նպատակով: Բայց ահա ընկ. Հուսեյնովը վախեցել է հիշատակել Սումգայիթում տեղի ունեցած հայերի ցեղասպանության խայտառակ փաստը, որը նախապես ծրագրվել - կազմակերպվել էր մուսուլմանական ֆանատիկոսների և հակահեղափոխական մուսաֆատիստների վերընձյուղվող բանդաների կողմից: Սումգայիթյան հայերի և նրանց պաշտպանող ռուս զինվորների կոտորածը բոլորովին չի հետաքրքրում Ձեր աշխատակցին: Նրան չեն հետաքրքրում նաև այդ արյունոտ քաղաքից փախչողների կյանքը, հանցագործների խայտառակ դատավարությունն այդտեղ: Այդ և այլ չարագործությունների մասին լրագրող Հուսեյնովը լռում է...

Ռ.Հուսեյնովի հոդվածում գիտակցաբար աղավաղված են փաստերը, հատուկ կեղծված են ԼՂԻՄ-ում և Հայաստանում տեղի ունեցած ժողովրդական հուզումների իրական պատճառները: Նրա դեղատոմսերն անընդունելի են, քանզի ներծծված են ազգայնամոլության թույնով և խոր ատելությամբ դեպի ոչ մուսուլմանական ժողովուրդները: Եվ

պարզապես զարմանում ես՝ ինչպե՞ս կարող են նման մարդիկ, որպիսին Ռ.Հուսեյնովն է, աշխատել սովետական կոմերիտմիության կենտրոնական մամուլում:

Ընդունեցեք բարի մաղթանքներս,
խորին հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
ՍՄԿԿ անդամ 1960թ.
Պատմական գիտությունների դոկտոր

18.61988
375025 քաղ. Երևան, Չարենցի 15:

3.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, ՍՄԿԿ ԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. Մ.Ս. ԳՈՐԲԱՉԵՎԻՆ

Հարգարժան Միխայիլ Սերգեևիչ.

Կենտրոնական մամուլը և հեռուստատեսությունը (բացառությամբ Հ.Բորովիկի «Դիրքորոշում» հաղորդաշարի) առավել հաճախ են ոչ ճիշտ հաղորդումներ տալիս Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցած իրադարձությունների մասին, ներկայացվում է կեսճշմարտություն Հայկական ԽՍՀ-ում տեղի ունեցած զանգվածային ցույցերի իրական շարժառիթների վերաբերյալ: Իր «արջի ծառայությունն» է մատուցել «Պրավդայի» թղթակիցների «էմոցիաները և բանականությունը» ըստ էության ժողովրդական հուզումների իրողությունն աղավաղող հոդվածը:

Ես, որպես կոմունիստ և Խորհրդային Միության քաղաքացի, զայրացած եմ այն բանի համար, որ խորհրդային իշխանությանն ու կոմունիստական կուսակցությանը մինչև վերջ նվիրված հայ ժողովուրդը մամուլի կենտրոնական օրգաններում ներկայացվում է ծուռ հայելու մեջ, այն ժողովրդի, որի զավակները պայքարել են Հոկտեմբերի բարիկադների վրա, Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, կատարել և կատարում են իրենց ինտերնացիոնալ պարտքը Աֆղանստանում, այն ժողովրդի, որը իր ճակատագիրը հավերժորեն կապել է ռուս մեծ ժողովրդի հետ: Չէ՞ որ նույն այդ թղթակիցներն իրենց իսկ աչքերով տեսան, թե ինչպես խաղաղ շքերթի մասնակիցներն իրենց գլխավերևում տանում էին քաղբյուրոյի անդամների լուսանկարները, խորհրդային դրոշներ ու տրանսպարանտներ:

Սկզբունքորեն ի՞նչ է պատահել Հայաստանում, որ այդպես ոչ ճիշտ և միտումնավոր ուռճացվում է մեր մամուլի կողմից: Չէ՞ որ այստեղ բացարձակապես հակասովետական ոչինչ տեղի չի ունեցել և չէր կարող տեղի ունենալ: Հիմնահարցի էությունն, ինչպես Դուք գիտեք, այն է, որ

20-ական թվականների սկզբին անարդարացի կերպով Հայաստանից բաժանված Լեռնային Ղարաբաղը (Արցախը), որտեղ ճնշող մեծամասնությամբ ապրում են տեղաբնիկ հայերը, ցանկանում են միավորվել Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հետ: Դուք նույնպես գիտեք, որ ԼՂԻՄ մարզգործկոմի նստաշրջանը փետրվարի 20-ին, կուսակցության մարզկոմի հավանությամբ, որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբ. ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկ. ԽՍՀ-ի հետ միավորվելու մասին՝ հիմք ունենալով ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածը: Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհուրդը 1988 թ. հունիսի 15-ին միաձայն իր հավանությունը տվեց ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի կազմում ընդգրկելու մասին: Ինչպես տեսնում ենք, տեղի է ունենում իսկական ժողովրդավարական գործընթաց խորհրդային Սահմանադրության շրջանակներում, այսինքն՝ մի երևույթ, ծնունդ առած մեր հասարակության հրապարակայնության, վերակառուցման և ժողովրդավարության ժամանակաշրջանում: Դուք, հարգարժան Միխայիլ Սերգեևիչ, Հարավսլավիայում եղած ժամանակ իրավացի կերպով բնութագրեցիք ԼՂԻՄ-ում և Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների նշանակությունը: Դժբախտաբար, մեր կենտրոնական մամուլը և «Պրավդայի» մի քանի աշխատակիցներ չհասկացան Ձեր բառերի էությունը և սևացրեցին Հայաստանի ողջ ժողովրդին, անվանելով նրան «էքստրեմիստ»: Դա արդարացի չէ, ազնիվ չէ:

Ես խորապես համոզված եմ, որ անձամբ Դուք և ԿԿ քարտուղարությունը կընդունեք արդարացի որոշում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու կապակցությամբ. դա պահանջում է նոր մտածողություն, հանուն որի ոտքի է կանգնել ողջ հայ ժողովուրդը: Հակառակ դեպքում, վախենում եմ, ծագելու է նոր Սումգայիթ՝ իր առավել սարսափելի հետևանքներով: Չէ՞ որ գաղտնիք չէ, որ այսօր այնպես եռանդագին գործում են ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության թշնամիները՝ պանթուրքիզմի և պանիսլամիզմի երդվյալ գաղափարախոսները...

Լեռնային Ղարաբաղի հայերը մշտապես եղել են Ռուսաստանի հուսալի հենարանը: Պետրոս Մեծը, Ա.Սուվորովը և մյուս մեծանուն այրերը մշտապես հենվում էին Արցախ-Ղարաբաղի քրիստոնյա հայ

ազգաբնակչության աջակցության վրա, նրանք ռուս զինվորների հետ կողք կողքի պայքարել են թուրքական և պարսկական զավթիչների դեմ: Իսկ ինչպե՞ս էին ղարաբաղցիները պայքարում ֆաշիստական օկուպանտների դեմ: Այդ փոքրիկ երկրամասը հայրենիքին է տվել Խորհրդային Միության ավելի քան 20 հերոսներ, փառապանծ մարշալներ, ծովակալներ և գեներալներ: Կարող եք հավատացած լինել. այսօր յուրաքանչյուր հայ հուսալի պահապան է մեր սոցիալիստական հայրենիքի հարավային սահմաններին: Նա չի մոռացել 1915 թ. եղեռնագործությունը, թուրք մարդասպանների չարագործությունները, նրան խոր ցավ է պատճառում հիշել հայերի ջարդը Սումգայիթում...

Նոր արյունալի ընդհարումներից խուսափելու նպատակով հանուն արդարության խնդրում եմ Ձեզ անհետաձգելիորեն քաղբյուրոյի օրակարգ մտցնել Հայկ. ԽՍՀ և ԼՂԻՄ-ի՝ մի կողմից, և Ադրբ. ԽՍՀ-ի՝ մյուս կողմից, կոնֆլիկտային իրադրության վերջնական և ամբողջապես լուծելու հետևյալ տարբերակները.

1. ԽՍՀՄ Սահմանադրության 2-րդ և 70-րդ հոդվածների հիման վրա՝ նկատի ունենալով ԼՂԻՄ-ի 1988թ. փետրվարի 20-ի և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի նստաշրջանի որոշումները՝ միավորել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ.

2. Միավորել ԼՂԻՄ-ին սահմանակից հայ ազգաբնակչություն ունեցող տարածաշրջանները և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը վերակազմավորել իբրև Արցախի Ինքնավար Հանրապետություն՝ այն մտցնելով ՌՍՖՍՀ կազմի մեջ:

ա) Ելնելով ռազմաստրատեգիական նկատառումներից և ԽՍՀՄ հարավային սահմանների պաշտպանական նպատակներից, նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ Նախիջևանի ԻԽՍՀ-ն ոչ մի անմիջական սահմանակցություն չունի Ադրբեջանական ԽՍՀ-ի հետ և սահմանակից է Հայկական ԽՍՀ-ին, մտցնել այդ ինքնավար հանրապետությունը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ:

Ներկա իրադրության պայմաններում այլընտրանք չեմ տեսնում:

Հուսով եմ, իմ առաջարկությունները հաշվի կառնվեն Ղարաբաղյան հիմնահարցը քննարկելու ընթացքում:

Խորին հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
ՍՄԿԿ անդամ 1960 թ.
Հայկ.ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի կուսբյուրոյի քարտուղարի 1-ին տեղակալ
Պատմական գիտությունների դոկտոր
21.6.1988
Հասցես՝ 375025,Երևան, Չարենցի 15

4.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, ԽՍՀՄ ՊՐԵՋԻԴԵՆՏ ԸՆԿ.Մ.Ս.ԳՈՐԲԱՉԵՎԻՆ, ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ.Ա.Ի. ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ, ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Ս.Ս.ԱԼԵՔՍԵԵՎԻՆ

Հարգելի ընկերներ.

ԼՂԻՄ-ում շարունակվում են Ադրբեջանի ղեկավարության վայրագությունները, հեղվում է մարդկանց արյունը, գնում է ի վերուստ կազմակերպված տեռորը հայ ժողովրդի դեմ: Մինչև ե՞րբ դուք պետք է լռեք և հովանավորեք Մութալիբովի և նրա օպրիչնիկների բարբարոսական գործողությունները: Հայ ժողովրդի համբերության բաժակը վաղուց լցվել է: Անհրաժեշտ է վերջնականապես լուծել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Բավական են կիսատ-պռատ որոշումները:

Հայաստանի մի խումբ գիտնականների անունից առաջարկում եմ ԽՍՀՄ պատգամավորների 4-րդ համագումարի օրակարգում մտցնել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցը: Հակառակ դեպքում Դուք անձամբ պիտի պատասխան տաք արյունալի հետևանքների համար: Հավանաբար, Դուք արդեն մոռացության եք տվել Սումգայիթի, Բաքվի... վայրագությունները, դաժան կոտորածները, սովետական հարավային սահմանների ապամոնտաժումը, փախստականներին: Չէ՞ որ Դուք նույնպես ունեք երեխաներ, մի՛ կորցրեք մարդկային խիղճը: Դո՛ւք, Միխայիլ Սերգեևիչ, հանդիսանում եք խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր, ինչո՞ւ եք հապաղում: Ես Ձեզ կոչում եմ իմաստնության:

Հարգանքով

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան

Հայկ.ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտական աշխատող, պատմ. գիտ. դոկտոր

1.7.1988, 375025, Երևան, Չարենցի փող. 15

5.

ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ, ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԸՆԿ. Վ.Ա. ՄԵԴՎԵԴԵՎԻՆ

Շատ հարգելի Վադիմ Անդրեևիչ.

Անկեղծորեն շնորհավորում եմ Ձեզ ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ ընտրվելու կապակցությամբ: Նշանակալից իրողություն է, որ մեր կուսակցության ղեկավարության մեջ ընտրվում են նաև գիտնականները, որոնց փորձն ու իմաստնությունն ուղղված են նաև գաղափարական ճակատի բարվոքմանը: Խորհրդային Միության և ամբողջ աշխարհի ժողովուրդներն այսօր բարձր են գնահատում կուսակցության և կառավարության քաղաքականությունը, որի շնորհիվ կնքվել է սովետա-ամերիկյան պատմական պայմանագիրը ռազմական կրճատումների մասին, անհամեմատ լավացել է միջազգային կլիման, նշանակալից տեմպեր է վերցնում վերակառուցումը, առավել խորությամբ է ընթանում սովետական հասարակության դեմոկրատացումը: Մենք նաև գիտենք, թե երբեմն որքան դժվար կացության մեջ են լինում քաղբյուրոյի և ԿԿ-ի անդամները հողի աշխատավորների, մտավորականների և բանվորների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում ունեցած զրույցների ժամանակ, քանզի անձի պաշտամունքը և լճացման տարիների բացասական երևույթները խոր հետք են թողել մեր հասարակության մեջ:

Այժմ կուսակցությունն արդարացիորեն վերակառուցման կուրս է վերցրել սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ուղղություններով: Սակայն ես պետք է նկատեմ, որ վերակառուցումը դեռևս արգելակվում է ազգամիջյան հարաբերությունների հարցերում: Կցանկանայի բացահայտորեն արտահայտվել այս կապակցությամբ.

Իմ պատկերացմամբ, նախկինում ծագած բոլոր ազգամիջյան հիմնահարցերն այժմ կարելի է լուծել ԽՍՀ Միության անպատճառ

ամրապնդման հիման վրա, սահմանադրության շրջանակներում, խաղաղ ճանապարհով:

Իմ հայացքով՝ առանց հատուկ ջանքերի կարելի էր լուծել «Աբխազական հիմնահարցը»: Որքան ինձ հայտնի է, այդ ինքնավար հանրապետության ժողովուրդները վաղուց ի վեր ձգտում են վերամիավորվել Ռուսաստանի Դաշնության հետ: Այստեղ վտանգավոր ես ոչինչ չեմ տեսնում: Այդ ցանկությունը կարելի էր բավարարել դեմոկրատական հենքի վրա՝ հարցման ճանապարհով: Կամ՝ արդյոք տրամաբանակա՞ն է, որ Հարավ-Օսեթական Ինքնավար Մարզը գտնվում է Վրաստանի կազմում, իսկ Հյուսիս-Օսեթական Ինքնավար Հանրապետությունը՝ ՌՍՖՍՀ-ի: Կարծում եմ՝ ոչ:

Համանման պատկեր ենք տեսնում մեր օրերի ամենաթեժ կետում՝ Լեռնային Ղարաբաղում: Օգտվելով վերակառուցման ընձեռած հնարավորությունից՝ ԼՂԻՄ-ի հայ ժողովուրդը ցանկանում է վերամիավորվել Հայաստանի հետ, որի կազմում նա եղել է վաղնջական ժամանակներից ընդհուպ մեր դարի 20-ական թվականները:

Կարծում եմ՝ Դուք կհամաձայնեք, որ ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում տեղի է ունեցել և տեղի է ունենում իսկական ժողովրդավարական գործընթաց, ինչի մասին չենք ցանկանում բացահայտորեն խոսել: Ընդառաջելով մարզի ազգաբնակչության ճնշող մեծամասնության ցանկությանը, աշխատավորների պատգամավորների նստաշրջանը, այնուհետև կուսակցության մարզկոմը ընդունեցին համապատասխան որոշումներ Հայաստանի նախկին այդ երկրամասը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին: Ինչպես հայտնի է, հանրապետության Գերագույն խորհուրդն իր համաձայնությունը տվեց ԼՂԻՄ-ն իր կազմում ընդունելու վերաբերյալ, իսկ Ադրբ.ԽՍՀ-ն, շրջանցելով Սահմանադրության 70-րդ հոդվածը և հենվելով 78-րդ հոդվածի վրա, ընդունեց հակառակ որոշում: Վերջին վճռական խոսքը պատկանում էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, սակայն, ինչպես ցույց տվեց Կենտրոնական հեռուստատեսությունը նիստերի դահլիճից ս.թ. հուլիսի 18-ին, ընդունվեց սոցիալ-տնտեսական բնույթի միակողմանի որոշում: Ըստ երևույթին, ղեկավարության խորհրդականները և ռեֆե-

րենտները փաստաթղթերի պատրաստման ժամանակ կեղծել են փաստերը և շփոթության մեջ են գցել կուսակցության և պետության ղեկավարներին: Ես դեռ չեմ խոսում բանավեճ մղելու տարրական կուլտուրայի մասին: Իսկ հայ ժողովուրդը հավատում էր և այժմ էլ հավատում է, որ քաղբյուրոն և նախագահությունը կծանոթանան պատմական իրողությունների և ծագած իրադրության պատճառների հետ և կընդունեն քաղաքական որոշում բոլոր հայերին հուզող այդ հարցի շուրջ:

Ցավոք, դեռևս մինչև նախագահության նիստը կենտրոնական մամուլը ցուցաբերեց իր ոչ բարի ծառայությունը՝ միակողմանի տեղեկատվությունները, թույլ տալով միտումնավոր, վիրավորական արտահայտություններ միութենական հանրապետության, բազմահազար ցուցարարների հասցեին՝ առավել շիկացնելով իրադրությունը: Փաստորեն, կենտրոնական մամուլը և հեռուստատեսությունը մտածված կերպով կազմակերպեցին ոչ անաչառ հաղորդումներ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցած հուզումների իսկական պատճառների մասին:

Ես չեմ կասկածում, որ մամուլի ազնիվ և իրենց գործին նվիրված մարդկանց թիկունքում թաքնված են հակավերակառուցողական ուժերը, որոնք նպատակասլաց կերպով բորբոքում են ազգամիջյան կրքերը՝ պաշտպանելով գործող առանձին գաղտնի խմբերի շահերը: Հավանաբար, նրանք ձգտում են, որքան հնարավոր է, շուտ մոռացության տալ հայերի անգութ կոտորածները Սումգայիթում, զանգվածային թունավորումները Հայկ. ԽՍՀ Մասիսի շրջանում, կոտորածները ադրբեջանական Խոջալու գյուղաքաղաքում և այլուր:

Ելույթ ունենալով Ռիգայում, նոյեմբերի 15-ին Լիտվական ԽՍՀ կուսակցական-տնտեսական ակտիվի առջև, Դուք ասացիք.

«Ինչ-որ բան մամուլի էջերին հանձնելուց առաջ, երիցս, իսկ հնարավոր է՝ տասն անգամ պետք է մտածել, թե ինչպես դա կազդի ազգամիջյան հարաբերությունների, ամբողջ բնակչության ինքնազգացողության և տրամադրության վրա («Պրավդա», 16-ը նոյեմբերի 1988): Կհասկանա՞ն արդյոք գոնե այժմ Ձեր խորհրդաստ բառերի էությունը մի շարք վայ-լրագրողներ, ցույց կտա ժամանակը:

Վերջերս ես ծանոթացա Ադրբ.ԽՍՀ Մինիստրների խորհրդի (27-ը ապրիլի, 1988 թ., նո. 145) «Ադրբեջանական ԽՍՀ պետական պահպանության ենթակա պատմության և մշակույթի հուշարձանների հաստատման մասին» որոշմանը:

Դուք պատկերացնո՞ւմ եք, սումգայիթյան կոտորածից ուղիղ մեկ ամիս հետո հաստատվում է հուշարձանների ցուցակ, որտեղ Նախիջևանի ԻՍՍՀ-ի և ԼՂԻՄ-ի հայկական ճարտարապետության հազարավոր հուշարձաններից և ոչ մեկը չի ներկայացված իբրև հայկական: Ինչպե՞ս կարելի է սեփականել հարևան ժողովրդի անցյալի քաղաքակրթությունն ու մշակութային ժառանգությունը, այն ժողովրդի, որն իր հազարամյա պատմության ընթացքում այդ տարածքներում կերտել է հեթանոսական տաճարներ, քրիստոնեական ճարտարապետության անզուգական հուշարձաններ ընդհուպ մեր հարյուրամյակի 20-ական թվականները:

Հիշում եմ, Գերագույն խորհրդի հուլիսի 18-ի նիստի ժամանակ ակադ. Եվգ. Պրիմակովն իր ելույթում ասաց, որ պատմությունը ոչ մի նշանակություն չունի ղարաբաղյան հարցը լուծելու համար: Ակադեմիական տիտղոս ունեցող մարդու նման դատարկահունչ հայտարարությունը, մեղմ ասած՝ քննադատության չի դիմանում: Հույս ունեմ, նրա համար տհաճ կլինի, եթե կարդա Միխայիլ Սերգեևիչ Գորբաչևի հետևյալ խոսքերը, որոնք նա արտասանել է 1988 թ. հոկտեմբերի 29-ին Մոսկվայի և Մոսկվայի մարզի երիտասարդության հետ հանդիպման ժամանակ («Պրավդա», 1988, 1-ը նոյեմբերի, նո.260): Մեր կուսակցության Գլխավոր քարտուղարը, մասնավորապես, ասաց.

«Գիտեք, այս գործում (խոսքը պատմության հուշարձանների մասին է - Գր.Գր.) սերունդների կապն է: Ինչ-որ մեկը ցանկանում է կտրել անցյալը, իբրև թե, այն, ինչ հետևում է, արդեն գնացած-վերջացած է և նշանակություն չունի: Դա սխալ է: Եթե սերունդների կապը կորչում է, փլուզվում է հասարակությունը: Մշակույթի ամեն մի շերտ, քաղաքակրթության ամեն մի շերտ և յուրաքանչյուր նոր սերունդ պետք է կանգնի ամուր հողի վրա, անցյալի նկատմամբ ունեցած անխոնա վերաբերմունքը միշտ շրջադարձվում է հսկայական բարոյական կորուստներով: Այդպես է

եղել այսօր, այդպես կլինի նաև վաղը: Մարդկանց մեջ եղած հոգով մարդը չի կարող չլինել պատմության մասնակիցը, նա պետք է շփվի նրա հետ, վերապրի նրանով»:
Հոյակապ է ասված.

Ահա թե ինչի մասին պետք է գրեին մամուլի հարգելի աշխատակիցները, և ոչ այն մասին, թե ինչպես այժմ Հայաստանի իշխանությունները «իրենց պահում են ոչ միշտ վճռական և հետևողական»: Ընդհակառակն՝ բոլորը գիտեն (այդ թվում նաև այդ թղթակիցները), որ խաղաղ ցույցերի և միտինգների օրերին հանգիստ չունեն հանրապետության ղեկավարները, որպեսզի հանկարծ չծագեն ծայրահեղ իրադրություններ բանակի և ժողովրդի միջև: Ո՞վ է տվել իրավունք այդ վայ-թղթակիցներին, որպիսիք են Օվչարենկոն և նրա նմանները, զրպարտել Հայաստանի կոմկուսի նորընտիր ղեկավարությանը: Ակամայից մտածում ես, որ նրանք հատուկ կատարում են ալիևշչինայի կամ դեռևս չհայտնաբերված ինչ-որ մաֆիայի հանձնարարությունը:

Մի շարք ամսագրեր և թերթեր («Նովոե վրեմյա», 1988, ապրիլ, նո.14, «Վետերան», նո. 41, Հավելված, «Տրուդ», «Պրավդա», փետրվարի 21 և այլն) իրենց էջերը լցրել են ապատեղեկատվությամբ, բացահայտ զրպարտանքով և թշնամական արտահայտություններով խորհրդային իշխանությանը նվիրված մարդկանց, հանրապետության կոմունիստների, մի ամբողջ ժողովրդի հասցեին: Ո՞ւմ է պետք այս ամենը:

Ի դեպ, ես պետք է նկատեմ, որ վերջին տարիներին շատ է գլուխը բարձրացրել իսլամը: Դա շատ վտանգավոր է, որովհետև, ինչպես Դուք գիտեք, Ղորանն իր ռազմաշունչ ոգով անտեսանելիորեն ներթափանցում է Խորհրդային Միության թուրքալեզու ժողովուրդների մտածելակերպի մեջ: Ժամանակը չէ՞ արդյոք անհաշտ պաքար մղելու մուսուլմանական քարոզիչների դեմ, որոնք իրենց հոգևոր սնունդը ստանում են դրսից:

Սույն թվականի մայիսի 22-ին ես նամակ գրեցի ընկ. Մ.Ս. Գորբաչևին (այն ստացվել է Կենտկոմի ընդհանուր բաժնում մայիսի 29-ին): Նամակում շարադրել եմ որոշ նկատառումներ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման կապակցությամբ: Կարդացե՛ք, խնդրում եմ:

Հայ ժողովուրդն իր ճակատագիրը հավերժորեն կապել է ռուս ժողովրդի հետ: Յուրաքանչյուր հայ մարդ մեր հայրենիքի հարավային սահմանների հուսալի պահապանն է: Այդ փորձված է Պետրոս Մեծի ժամանակներից: Հայերը, այդ թվում նաև ղարաբաղցիները, միշտ հենարան են հանդիսացել Ռուսաստանի համար: Հայորդիներն աշխատել են Վ.Ի.Լենինի հետ, կռվել են Հոկտեմբերի բարիկադների վրա, հերոսաբար մարտնչել են ֆաշիստական զավթիչների դեմ...

Հայաստանից հարավ Թուրքիան է՝ հայ ժողովրդի ոխերիմ թշնամին, 1915 թ. հայոց ցեղասպանության կազմակերպիչը, ՆԱՏՕ-ի ակտիվ անդամը, ողջ Արևելքի օտտոմանացման գաղափարախոսը: Հայաստանը, իբրև քրիստոնեական երկիր, մշտապես խանգարել է նրան հասնելու իր նպատակին՝ թուրանյան կայսրության ստեղծմանը: Հայաստանը սահմանակցում է նաև Իրանի հետ: Այդ իրողությունները, կարծում եմ, անհրաժեշտ է հաշվի առնել նման իրադրությունները վերլուծելու և ԽՍՀՄ ազգամիջյան հարաբերությունների ծագած հարցերը քննելիս:

Կրկնում եմ՝ հայ ժողովուրդը հավերժորեն կատարել է իր պատմական ընտրությունը. ապրել Ռուսաստանի հետ՝ խորհրդային ժողովուրդների ընտանիքում: Եվ թող ոչ ոք չհամարձակվի նրա մտադրությունը խեղաթյուրել ծուռ հայելու մեջ զրպարտության և պրովոկացիոն դատողությունների օգնությամբ: Այո՛, Հայաստանն այսօր դժվար օրեր է ապրում, բայց ժողովուրդը համոզված է, որ ԼՂԻՄ-ի հիմնահարցը կորոշվի արդարացիորեն, քաղաքական ճանապարհով, առանց անտեղի ձգձգման: Այդ են պահանջում նոր մտածողությունը, սոցիալիստական իրավական պետության շահերը:

Խորին հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր

20.11.1988
375025, Երևան, Չարենցի փող. 15:

6.

ՄՈՍԿՎԱ, «ՆՈՎՈՅԵ ՎՐԵՄՅԱ» ԱՄՍԱԳՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԸՆԿ. ՎԻՏԱԼԻ ԻԳՆԱՏԵՆԿՈՅԻՆ

«Նովոյե վրեմյա» ամսագրում (1988 թ. 1-ը ապրիլի նո. 14, էջ 30-32) «Լեռնային Ղարաբաղի շուրջ» խորագրի տակ տպագրվել է «Օրենք սահմանների մասին և օրենքի սահմանները» հոդվածը, որտեղ շարադրված է ամսագրի տեսաբան Լ. Ելինի զրույցի բովանդակությունը ԽՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի աշխատակիցներ իրավագիտության դոկտոր Բ.Լազարևի և իրավագիտության թեկնածու Ի.Մուկսինովի հետ: Նույն տեղում զետեղված է այժմյան Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած սխեմատիկ քարտեզը, ուր մտցված է նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Պետք է խոստովանեմ, որ ինձ՝ իբրև ընթերցողի, զարմացրին Ձեր մեկնաբանների աղքատիկ գիտելիքները Լեռնային Ղարաբաղի և լայն ժողովրդական զանգվածների բուռն ալեկոծումների պատճառների մասին:

Ընկ. Լ.Ելինի այն հարցին, թե «Ինչո՞ւմ է Լեռնային Ղարաբաղի յուրահատկությունը»,- Բ. Լազարևը պատասխանում է.

—«Լեռնային Ղարաբաղը ուղղակիորեն սահմանակից չէ Հայաստանի տարածքին և պատմականորեն (*) ամուր ինտեգրվել է Ադրբեջանի տնտեսական համակարգի մեջ», իսկ Ի.Մուկսինովն իր կողմից լրացնում է, որ թեև մարզի 180 հազար բնակիչներից «75,5 տոկոսը կազմում են հայերը», սակայն «լեռնաշղթան» «նույնիսկ թույլ չի տալիս ընդունելու Երևանի հեռուստատեսության հաղորդումները»:

Նախ՝ Բ. Լազարևի փաստարկումները համոզիչ չեն, քանզի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը նույնպես «ուղղակիորեն սահմանակից» չէ Ադրբեջանին (նայեցեք նույն Ձեր գծած քարտեզին), սակայն 20-րդ դարի 20-ական թվականներին Ստալինի, Լենինի և Չիչերինի նախաձեռնությամբ այն «ամուր» մտավ Ադրբեջանի կազմում: Ինչպես տեսնում ենք, Բ.Լազարևի մեկնաբանությունը կրում է

միակողմանի բնույթ:

Ինչ վերաբերում է ԼՂԻՄ-ին, ապա նա ավելի մոտ է Հայաստանին, քան Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը՝ Ադրբեջանին (քարտեզի վրա այն դիտմամբ չի նշված):

Մեր հարգելի գիտնական-իրավաբանը սխալվում է նաև ինտեգրման խնդիրներում, որը բացատրվում է պատմական իրողությունների չիմացությամբ կամ միտումնավորությամբ:

Իսկ այժմ վերադառնանք Ի.Մուկսինովի հիշատակած «լեռնաշղթային», որն, իբր թե խանգարում է ԼՂԻՄ-ի՝ Հայաստանին վերամիավորվելուն: Հուսով եմ՝ նա գիտի, որ պատմական Հայաստանի Արցախ նահանգը 1923 թ. կոչվեց ԼՂԻՄ, չնայած «բարձր լեռնաշղթաներին», վաղնջական ժամանակներից իր տեղաբնիկ հայ ազգաբնակչությամբ մշտապես եղել է Հայաստանի կազմում: Անշուշտ, այստեղ պատճառը ոչ թե «լեռնաշղթան» է, ինչպես ենթադրում է Ի.Մուկսինովը (չէ՞ որ Անդրկովկասի հանրապետությունները, չնայած բարձր լեռներին, ընդունում են Կենտրոնական հեռուստատեսության հաղորդումները), այլ պատճառն ուրիշ է, որի մասին լռում են մեր մասնագետները: Նրանք «մոռացել են» ԽՍՀՄ քաղաքացիների սահմանադրական իրավունքների մասին, սահմանադրության 70-րդ հոդվածը:

Ղեկավարվելով մի շարք թղթակիցների միտումնավոր հաղորդումներով ԼՂԻՄ-ում և Հայաստանում տեղի ունեցող զանգվածային ալեկոծումների իրական պատճառների մասին, ցավոք, «Նովոյե վրեմյան» նույնպես արծանագրում է.

«Մամուլում քանիցս խոսվել է էքստրեմիստական ձևերի մասին, որոնք առկա դարձան նաև Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների ժամանակ»: Դա, հարգելի ընկերներ, մեղմ ասած՝ բամբասանք է հայ ժողովրդի հասցեին:

Ինչպե՞ս կարելի է «էքստրեմիստ» անվանել բազմահազարանոց խաղաղ ցույցերի մասնակիցներին, որոնք իրենց գլուխներից վեր բարձր պահում էին Լենինի, քաղբյուրոյի անդամների նկարները: Արդյո՞ք միամիտ պահվածքով չեն հնչում Բ. Լազարևի խոսքերն այն մասին, իբր «չի կարելի հրապարակայնությունն օգտագործել վերակառուցման

դեմ...»: Բայց չէ՞ որ հենց «Ղարաբաղյան հիմնահարցը» վերակառուցման ծնունդ է, որը դարձավ առաջին ծիծեռնակը մեր հասարակության հրապարակայնության և ժողովրդավարացման ճանապարհին:

Գիտնականը, առավել ևս իրավագիտության ներկայացուցիչը, պետք է արդարացի լինի: Այդ է պահանջում մեր հասարակության հեղափոխական նորացման ժամանակը: Մենք չպետք է վախենանք բացահայտ ճշմարտությունն ասելուց: Մենք պարտավոր ենք ուղղել նախկինում թույլ տրված սխալները:

Խորապես հարգելի ընկ. Իգնատենկո.

Ձեր փառապանծ ամսագիրը լույս է տեսնում աշխարհի 10 լեզուներով: Այն մեծ հեղինակություն վայելող համաշխարհային մասշտաբի հրատարակություն է: Խնդրում եմ Ձեզ՝ առավել ուշադիր եղեք նման հարցազրույցների ժամանակ, ինչպիսին է «Օրենք սահմանների մասին կամ օրենքի սահմանները» հարցազրույցը:

Ընդունեցեք բարի ցանկություններս.

Անկեղծորեն՝

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան

Հայկ.ԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի

կուսբյուրոյի քարտուղարի 1-ին տեղակալ

Պատմական գիտությունների դոկտոր

25.6. 1988

Հասցես՝ 375025, Երևան, Չարենցի 15

7.

«ԳԼԱՍՆՈՍՏ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄԻՆ

Սրտանց ողջունում եմ «Գլասնոստ» շաբաթաթերթի առաջին համարի լույս ընծայումը: Հուսով եմ՝ այն կլինի Միության ընթերցողների հետաքրքիր, անաչառ և սիրելի թերթը, որը կպաշտպանի ոչ միայն մեր կուսակցության ու կառավարության առաջնորդների, այլև շարքային կոմունիստների շահերը: Առաջին խմբագրական հոդվածում Դուք բոլորովին արդարացիորեն արձանագրում եք, որ «այսօր ճշմարիտ կերպով հարցեր տալու ժամանակն է»: Ահա և, օգտվելով այդ իրավունքից, ես ուզում եմ Ձեզ ուղղել մի շարք հարցեր, որոնք հուզում են ոչ միայն ինձ, այլև բազմաթիվ ընթերցողների: Ազնվորեն ասած՝ ես չէի ցանկանա, որ անաչառ պատասխանների համար Ձեզ ազատեին աշխատանքից. չէ՞որ Դուք էլ ունեք զավակներ, ընտանիք, անվերջանալի կարիք՝ փոքրիշատե լավ ապրելու ակնկալիքով: Մի խոսքով, վարվեցեք այնպես, ինչպես թելադրում է Ձեր խիղճը:

Հարցերս կլինեն ուղղակի և բացահայտ.

1. Ո՞վ և ինչպե՞ս կազմակերպեց խորհրդա-իրանական պետական սահմանի ապասարքահանումը (դեմոնտաժ) և ի՞նչ նպատակ ուներն նրա սադրիչները: Կոնկրետ՝ ո՞վ պատիժ կրեց հարյուրավոր կիլոմետրեր քարուքանդ անելու համար:

2. Նախիջևանի Ինքնավար Հանրապետության նախագահությունը պաշտոնապես որոշում է ընդունել ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին, իսկ Կենտրոնը մինչև այժմ չի արձագանքել (հակազդել) այդ առթիվ: Ինչպե՞ս կարող եք Դուք բացատրել նման լռությունը. համաձա՞յն է, թե ոչ: Չէ՞ որ դա իրավասու որոշում չէ:

3. Ադրբեջանի կողմից բարբարոսական շրջափակման հետևանքով Հայկ. ԽՍՀ կորուստները կազմում են մի քանի միլիարդ ռուբլի: Ինչո՞ւ մինչև այժմ Կենտրոնը լռում է և չի ցանկանում պատժել մեղավորներին: Պատասխանատո՞ւ է արդյոք անձամբ երկրի պրեզիդենտը ադրբեջանական ղեկավարության անմարդկային նման գործողությունների համար, որոնք մինչև օրս շարունակում են հայերի, մասնավորապես, ԼՂԻՄ-ի ազգաբնակչության իրավունքները ոտնահարելու պանթուրքական քաղաքականությունը արտակարգ դրության պարետ, գեներալ Վ.Սաֆոնովի միջոցով: Մինչև ե՞րբ պետք է լռենք, թե՞ դա հատուկ է արվում, որպեսզի «Ղարաբաղ» գոռացողների բերանը փակեն: Ես, որպես 30 տարվա կոմունիստ, անկեղծորեն բողոքում եմ Մ.Ս.Գորբաչևի և նրա շրջապատի չմտածված քաղաքականության դեմ՝ ԽՍՀՄ շրջանակներում միասնական հայ ժողովրդի երկու մասերը միավորելու կապակցությամբ: «Վերակառուցումը վերածնում չէ» տխրահռչակ բառակապակցությունը հնչում է դեմագոգիկ ծևով: Իսկ ե՞րբ պետք է կիրառենք «ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ» հումանիստական բառը: Ղարաբաղը, ուր 80 տոկոսից ավելի հայեր են ապրում, ցանկանում է վերամիավորվել ոչ թե Թուրքիայի, դեպի ուր ձգտում է Ադրբեջանը, այլ՝ Խորհրդային հանրապետության հետ: Մեր ստրատեգներն ու պետության առաջնորդները երբևէ պե՞տք է իմանան այդ տարրական բաները:

4. Ասացեք, խնդրեմ, իշխանության վերին էշելոններին երբևէ հետաքրքրե՞լ է, թե որքա՞ն և ո՞ր արտադրության զենք են ստացել Թուրքիայի և Իրանի միջոցով Ադրբեջանի ժող.ճակատի մարդասպանները: Չէ՞ որ մինչև օրս այդ սահմանագոտում վերջնականապես չի վերականգնված կարգուկանոնը: Լինենք իրատեսներ: Այլապես թմբկահարում ենք Հայաստանի աշխարհազորայինների մասին, որոնք պաշտպանում են հանրապետության սահմանները ադրբեջանական մարդասպաններից: Չէ՞ որ եղել են Սումգայիթը, Բաքուն, Կիրովաբադը, Խոջալուն, որտեղ տուժել են ոչ միայն հայերը, այլև Միության տարբեր ժողովուրդները: Ի՞նչ երաշխիք կա, որ այս ամենը չի կրկնվելու:

5. Մինչև ե՞րբ պետք է շարունակվեն Կենտրոնական հեռուստատեսության և կենտրոնական մամուլի միակողմանի, կեղծված և պրովոկացիոն հաղորդումները Ռուսաստանին նվիրված քրիստոնեական հայ ժողովրդի մասին:

Անկեղծորեն՝

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան

ՍՄԿԿ անդամ 1960 թ., պատմ. գիտ. դոկտոր

18.8. 1988

Հասցես՝ 375025, Երևան, Չարենցի փող. 15:

8.

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Ս.Ս. ԱԼԵՔՍԵԵՎԻՆ

Հարգարժան Սերգեյ Սերգեևիչ.

Բարի օր: Կարծում եմ՝ Դուք ինձ հետ կհամաձայնեք, եթե ասեմ, որ մինչև օրս ԼՂԻՄ-ի հիմնահարցի լուծման ուղղությամբ ընդունվել են չմտածված կիսատ-պռատ որոշումներ, որոնք ոչ թե նպաստել են խաղաղությունն ու փոխադարձ համաձայնությունը վերականգնելուն, այլ առավել սաստկացրել են լարվածությունն այդ տարածաշրջանում: Եվ, որպես կանոն, պրեզիդենտի և Միության Գերագույն խորհրդի ոչ տրամաբանական գործողությունների հետևանքով մինչև օրս թափվում է խաղաղ մարդկանց արյունը, զոհվում են երիտասարդ զինվորները, վայրագություններ են կատարում ադրբեջանական ՕՄՕՆ-ականները մարզի հայկական գյուղերում: Հարց է ծագում՝ մինչև ե՞րբ պետք է շարունակվեն այս անօրինականությունները: Ժամանակը չէ՞ խիստ պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր թույլ են տալիս հակասահմանադրական արարքներ՝ ի հաճույս Ադրբեջանի ներկա ղեկավարության (Մութալիբով, Պոլյանիչկո, Կաֆարովա և այլք):

Կարծում եմ՝ հարկավոր է տարբերակել երկու տեսակետներ.

1. Ո՞ւր է ձգտում Ղարաբաղի հայ ժողովուրդը. դեպի Միություն:

2. Ո՞ւր է ձգտում Ադրբեջանի ղեկավարությունը. դեպի պանթուրքիզմ՝ Թուրքիայի գլխավորությամբ:

Վերջերս ես իմացա պրեզիդենտի նոր հրամանագրի մասին, սակայն այն չի ստորագրվել ադրբեջանական կողմի ճնշման հետևանքով: Դուք, հարգելի Սերգեյ Սերգեևիչ, իբրև Միության Սահմանադրական վերահսկողության նախագահ, կարող էիք այս կապակցությամբ ասել Ձեր

ծանրակշիռ խոսքը: Չէ՞ որ այժմ Լեռնային Ղարաբաղում չկա սովետական իշխանություն: Այնտեղ սանձարձակորեն շրջում են Մութալիբով-Պոլյանիչկոյի լկտի օպրիչնիկները: Պոլյանիչկոն պետք է կանգնի դատարանի առջև՝ Աֆղանստանում սովետական զինվորների ոչնչացման համար: Եվ այդ կլիներ արդարացի: Աշխարհում ոչ մի տեղ այնպես կոպտորեն չեն ոտնահարվում մարդու իրավունքները, ինչպես Լեռնային Ղարաբաղում: Իսկ մենք փակում ենք մեր աչքերը, որպեսզի չնեղացնենք Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, Շուշիի մարդասպաններին: Գնացեք, խնդրում եմ, ԼՂԻՄ, և սեփական աչքերով Դուք կտեսնեք, թե ինչ է կատարվում այնտեղ զենքի միջոցով: Հույս ունեմ, ադրբեջանական ՕՄՕՆ-ականները գոնե Ձեզ կխնայեն և չեն արտաքսի ստեփանակերտյան օդանավակայանից, ինչպես կատարվեց վերջերս Եվրոպառլամենտի ներկայացուցիչների, ԽՍՀՄ և Ռուսաստանի Դաշնության ժողովրդական պատգամավորների հետ: Դա խայտառակ ակտ է՝ ուղղված, այսպես կոչված՝ Խորհրդային սոցիալիստական դեմոկրատական հանրապետության դեմ: Ինչու պրեզիդենտն այդպես վախենում է ադրբեջանական լիդերներից. չէ՞ որ նա ռուս քրիստոնյա է, բայց պաշտպանում է մուսուլմանական ազգայնամոլների շահերը: Ո՞ւմ է պետք այդ էժանագին քաղաքականությունը, որը ոտնահարում է քրիստոնյա հայ ժողովրդի արժանապատվությունը: Ազգամիջյան հարցերում պրեզիդենտը թույլ է տալիս սխալը սխալի հետևից: Կոպիտ ուժով չի կարելի ծնկի բերել ժողովրդին: Վաղուց անցել է ունտեր-պրիշիբեևների դարաշրջանը:

Դուք, հարգելի Սերգեյ Սերգեևիչ, փառք աստուծո, գիտնական եք համաշխարհային մասշտաբով: Ինչո՞ւ եք հապաղում ասել ճշմարտությունը մեր պրեզիդենտին Ղարաբաղյան հիմնահարցը լուծելու կապակցությամբ: Արդյո՞ք քիչ է հեղված արյունը: Թող նա պատասխանատվության ենթարկի խորհրդա-իրանական սահմանը քարուքանդ անողներին, խորհրդային հանրապետության շրջափակման կազմակերպիչներին, այն էլ այս սարսափելի երկրաշարժից հետո...

Ուղարկում եմ Ձեզ Երևանի պետհամալսարանի պրոֆեսոր Լ.

Կարապետյանի «ԼՂԻՄ-ի հիմնահարցի որոշման սահմանադրական հիմունքների մասին» հոդվածը:

Անկեղծորեն Ձեզ հարգող՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր

22.2. 1989
375025, Չարենցի փող. 15:

9.

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Ս.Ս.ԱԼԵՔՍԵԵՎԻՆ

Խորապես հարգելի Սերգեյ Սերգեևիչ.

Առաջարկում եմ. Ներկայացված Սեփականության մասին 23 հոդվածը օրինագծից հանել, քանզի այն ցույց է տալիս միութենական հանրապետության բացահայտ գերակայությունն ինքնավար հանրապետությունների նկատմամբ: Մեզանում հավասարազոր հանրապետությունների ֆեդերացիա է և ժամանակն է վերջ տալ ֆեոդալական կախվածությանը:

Նշված պարբերության փոխարեն առաջարկում եմ հետևյալը.

«Ինքնավար կազմավորումներն իրավունք ունեն իրենց մոտ կայացած համաժողովրդական հանրաքվեի (ռեֆերենդումի) միջոցով լինել ԽՍՀՄ շրջանակներում ցանկացած միութենական հանրապետության կազմում»:

Առաջարկվող դրույթը տալիս է համապարփակ պատասխան ազգամիջյան հարաբերությունների արմատական հարցերին:

Ցանկանում եմ Ձեզ առողջություն և համբերություն:

Հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Հայկ. ԽՍՀ. ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի բաժնի վարիչ

10.

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԸՆԿ. Ա. Ի. ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ

Մեծարգո Անատոլի Իվանովիչ.

Շնորհակալությամբ արձանագրում ենք, որ մեր ղեկավարներից առաջինը Դուք անկեղծորեն և զայրույթով դատապարտեցիք Հայկական Սովետական Հանրապետության խայտառակ շրջափակումը «ինտերնացիոնալ» Ադրբեջանի պարագլուխների հրահանգով: Այդ անմարդկային վանդալիզմի բարբարոսական ակտը Ադրբ. ԽՍՀ-ի, որը ձգտում է միավորվել Թուրքիայի հետ, կուսակցական ղեկավարության գիտությամբ, պետք է դատապարտվի ոչ միայն Ձեր, այլև Մ.Ս.Գորբաչևի կողմից: Անկեղծորեն ասած՝ մեզ զարմացնում է նրա ադրբեջանամետ դիրքորոշումը: Հուշեցեք նրան, խնդրում եմ, որ այդպես չի կարելի. Հայաստանը մեր հայրենիքի հարավային սահմանների հուսալի պաշտպանն է:

Ինչ վերաբերում է շրջափակված ԼՂԻՄ-ին, ապա նա ըստ էության վաղուց ի վեր դուրս է եկել Ադրբ. ԽՍՀ-ի կազմից: Սումգայիթում, Խոջալուում, Կիրովաբադում, Բաքվում և այլ վայրերում հայերի եղեռնի կազմակերպիչներին գրգռում է այն փաստը, որ հայ ժողովուրդը, այդ թվում նաև ղարաբաղցիները ունեն ռուսական կողմնորոշում, պայքարել են թուրք նվաճողների դեմ ռուսական դրոշների ներքո: Լինենք իրատես:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր

22.11.1989
375025, Երևան, Չարենցի 15:

11.

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԻՆ

Խորապես հարգելի ընկ. խմբագիր

«Խորհրդային Ղարաբաղ» (ռուսերեն) թերթում (1989, օգոստոսի 6, նո.177) ես և իմ գործընկերները կարդացինք Ս.Մոսունցի հաղորդումն այն մասին, թե ինչպես ծառայողական պարտականությունները կատարելիս ներքին ծառայության ավագ լեյտենանտ ընկ. Ա. Պոլտարակը իրեն դրսևորել է վճռականորեն և օպերատիվ կերպով հեղուկ գազի Բարդայի կայանում, շուկայում և Բարդա-Միրբաշիր ճանապարհի վրա:

Եթե հնարավոր է, խնդրում եմ Ձեր թերթի միջոցով մեր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել Ա.Պոլտարակին, ինչպես նաև երեք զինծառայողներին՝ նրանց արիության և հստակ գործողությունների համար:

Եթե ԼՂԻՄ-ում գտնվող սպաները և զինվորները նույն կերպ օպերատիվ և համարձակ գործեին, ապա կկրճատվեին խայտառակ միջադեպերը, որոնց կազմակերպիչները վերակառուցման թշնամիներն են:

Հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Հայկ.ԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ
Պատմ. գիտ. դոկտոր

14.8. 1989
375025, Երևան, Չարենցի 15:

12.

ՄՈՍԿՎԱ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, «ՎՐԵՄՅԱ» ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

1990 թ. փետրվարի 2-ին «Վրեմյա» ծրագրից հետո մենք դիտեցինք հարցազրույց Ադրբեջանի Ժող.ճակատի պարագլուխներից մեկի՝ ոմն «գրողի» հետ: Ամոթ է, որ հանցագործության տեղում բռնված մարդասպանին հնարավորություն է ընձեռվել Կենտրոնական հեռուստատեսությամբ այդպես ազատորեն, ցինիկ ժպիտով խոսել ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության մասին, երբ մինչև ծերբակալվելը կատաղությամբ կոչ էր անում սպանել Բաքվի, Կիրովաբադի, Սումգայիթի, Խանլարի և «ինտերնացիոնալ» Ադրբեջանի այլ բնակավայրերի ռուսալեզու խաղաղ բնակիչներին: Ո՞ւմ է պետք այս էժանագին բեմականացումը: Ավելի լավ է, թող այդ տականքը պատասխան տա իր մեղքերի համար, իր կատարած սպանությունների, հայերի նկատմամբ գործած եղեռնի, հրկիզումների, անմեղ մարդկանց թափած արյան համար, սահմանապահների կանանց և մայրերի, ծերերի և մանուկների արտասուքի համար, պանթուրքական բանդաների կողմից այնպես նենգորեն սպանված մեր երիտասարդ զինվորների համար:

Կարծում եմ՝ Կրեմլը, ի վերջո, պետք է կատարի համապատասխան եզրակացություններ, ո՞վ է սովետական իշխանության թշնամին և ո՞վ է բարեկամը: Հակասովետական կամպանիան Բաքվում շարունակվում է: Մինչև օրս Ադրբեջանի երկաթգծի կայարաններում կանգնած են բեռնված վագոնները: Շրջափակումը քայքայեց Հայաստանի ողջ տնտեսությունը: Թող հասարակությունից մերժված այդ անձը պատասխանի նաև այս հարցին: Ո՞վ է հրահանգել ԼՂԻՄ-ի հատուկ ռեժիմի պարետին՝ ադրբեջանական դրոշը բարձրացնել այդ երկրամասի մարզկոմի դատարկ շենքի վրա: Ժողովրդավարություն չի լինում ատրճանակների և թնդանոթների փողերի տակ: Այս մասին պետք է հիշեն մեր պետության և կուսակցության առաջնորդները: ԼՂԻՄ-ի ժողովուրդը վաղուց ինքնո-

րոշվել է ժողովրդավարական ճանապարհով:

Ժամանակը չէ՞ արդյոք խիստ պատասխանատվության ենթարկել ազգամիջյան խռովություններ հրահրողներին: Պե՞տք է երբևէ վերականգնվի արդարությունը:

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
ՍՄԿԿ անդամ 1960թ.

3.2. 1990
375025, Երևան, Չարենցի 15:

13.

ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԸՆԿ. Բ.Կ. ՊՈՒԳՈՅԻՆ ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԸՆԿ. Բ.Վ. ԳՐՈՄՈՎԻՆ

Հարգելի Բորիս Կարլովիչ,
Հարգելի Բորիս Վսեվոլոդովիչ.

Անկեղծորեն շնորհավորում եմ Ձեզ այդ բարձր պաշտոններին նշանակվելու կապակցությամբ: Դուք աշխատանքի եք անցնում մեր երկրի համար շատ բարդ և պատասխանատու ժամանակաշրջանում և, Աստված տա, որ ամեն ինչ բարվոք լինի, խաղաղություն հաստատվի Միջին Ասիայում, Ուկրաինայում, Մերձբալթիկայում, Մոլդավիայում և Միության մյուս «թեժ կետերում», ընդ որում նաև Անդրկովկասում՝ Հայաստանում և Ադրբեջանում, ուր մինչև օրս հեղվում է անմեղ մարդկանց արյունը:

Համար 1-ին «թեժ կետը» Լեռնային Ղարաբաղն է, ուր, ինչպես Դուք գիտեք, վաղնջական ժամանակներից ապրում են հայեր, որտեղ նրանց իրավունքները ծայրաստիճան ոտնահարված են: Այստեղ չկա սովետական իշխանություն. այն վերացված է ադրբեջանական ղեկավարության անօրինական պահանջով՝ ԽՍՀՄ պրեզիդենտի հաճությամբ:

Կարծում եմ՝ Դուք կհամաձայնեք ինձ հետ, եթե ասեմ, որ այդ անմտածված ակտը առավել խորացրեց Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած լարված հարաբերությունները: Փաստորեն երկու հարևան հանրապետությունների միջև գնում է չհայտարարված պատերազմ, և դրանից, բնական է, մեծապես տուժում են երկու կողմերի խաղաղ բնակիչները:

Այժմ ԼՂԻՄ-ում շարունակվում են ադրբեջանական իշխանությունների սանձարձակությունները և այդ ողբերգության մեջ ոչ պակաս դեր ունի արտակարգ դրության պարետ, գեներալ-մայոր Վ. Սաֆոնովը, որը ինչ-որ անբացատրելի պատճառներով պաշտպանում է միայն ադրբեջանական կողմին՝ հլու-հնազանդ կատարելով Ա. Մութալիբովի և ոչ՝ ներքին գործերի մինիստրի կամքը: Գործը հասել է այն աստիճան ստորության, որ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի 2-րդ քարտուղար Պոլյանիչկոն իր օպրիչնիկներով շրջում է Լեռնային Ղարաբաղի հայկական գյուղերում՝ ստիպելով մարդկանց թողնել իրենց հարազատ օջախները կամ ընդունել Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի Խոջալուի...արյունախում մարդասպաններին, սովետա-իրանական սահմանը քարուքանդ անողներին, սովետական հանրապետության խայտառակ շրջափակման համար, այն էլ այնքան սարսափելի երկրաշարժից հետո:

Պատասխանեցեք, խնդրում եմ, ո՞վ է իրավունք տվել ադրբեջանական լիդերներին փակել Սարատովից ադրբեջանական տարածքներով Հայաստան եկող գազամուղը: Չէ՞ որ դա ստորություն է և անմարդկային վարմունք: Շրջափակման հետևանքով Հայաստանի վնասը կազմում տասնյակ միլիարդ ռուբլիներ: Ո՞վ պետք է հատուցի այդ վնասը: Իհարկե, Ադրբեջանը: Իսկ երկրի պրեզիդենտը, փոխանակ խստորեն պատժելու շրջափակման կազմակերպիչներին, ցավոք, լռում է: Այդ հարցերում Միխայիլ Սերգեևիչը վատ խորհրդականներ ունի: Դրանց բոլորին պետք է դուրս շպրտել, որովհետև նրանք ներսից քանդում են Միությունը: Մինչև օրս չի գործում Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոմայրուղին: «Վերևի» ցուցմունքով, ինչպես մի անգամ խոստովանեց գեներալ Սաֆոնովը, այստեղ կանգնած են ներքին զորքերի ստորաբաժանումները: Հարց է ծագում՝ ո՞վ է հրաման տվել շրջափակել 8-կիլոմետրանոց ճանապարհը (ԼՂԻՄ-ից մինչև Հայաստան): Դա անմտություն է՝ «Բեռլինյան պատ» կառուցել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայկական բնակավայրերի միջև: Դա ի՞նչ ստոր քաղաքականություն է՝ իրարից բաժանել միևնույն ժողովրդի երկու հատվածները: Ո՞վ պետք է պատասխան տա այդ հրեշավոր գործողությունների համար:

Այնուհետև՝ ԼՂԻՄ-ում գինաթափվում է միայն հայկական կողմը, իսկ

ադրբեջանական տեռորիստական զինված խմբավորումները ազատորեն շրջում են ողջ մարզում՝ ավտոմատներով զինված՝ սպանելով հայ ազգության խաղաղ բնակիչներին, քշելով նրանց անասունը, ոչնչացնելով քրտինքով աճեցրած նրանց բերքը: Ինչո՞ւ ենք այդ մասին լռում: Ամո՞թ է, թե վախենում ենք ճշմարտությունն ասել: Չէ՞ որ դրանք նույն մարդիկ են, որոնք անպատժելիորեն քարուքանդ արեցին ԽՍՀՄ-ի սրբազան սահմանները: Այստեղ, ինչպես տեսնում ենք, գնում է ոչ թե «Ելակի պատերազմ» (թող մեզ ների հարգելի Ռաֆիկ Նիշանովիչը): Դա պանիսլամիզմի գաղափարախոսների ձեռքի գործն է, որոնց վերջնական նպատակն է Ղորանի երկրպագուների միավորումը թուրքական կայսրության շուրջ, իսկ Հայաստանը, որպես քրիստոնեական երկիր՝ Ռուսաստանին նվիրված, իբրև թե խանգարում է նրանց: Ե՞րբ պետք է մենք հասկանանք այս անվիճելի իրողությունը և իրերը կոչենք իրենց անուններով:

Ստեփանակերտում՝ ԼՂԻՄ-ի մարզային կենտրոնում, հայկական միլիցիան նույնպես զինաթափված է, իսկ ադրբեջանականը շրջում է ավտոմատներով և «պահպանում է» քաղաքի մոնոհայկական ազգաբնակչությանը: Քաղաք, որտեղ չի ապրում ոչ մի ադրբեջանցի: Ո՞վ է իրավունք տվել այդ «կարգուկանոնի պահապաններին» շրջափակման մեջ պահել Ստեփանակերտի օդանավակայանը: Այս ամենը նրանից է, որ մարզում չկա սովետական իշխանություն, իսկ պարետությունը հանձնել է իր դիրքերը, այսպես կոչված՝ «կազմկոմիտեին», որտեղ ոչ մի հայ չկա: Մի՞թե սա արդարացի է: Ինչո՞ւ է այդպես հլու-հնազանդ կատարում Մութալիբովի կամքը Նաջիբուլայի նախկին խորհրդական Պոլյանիչկոն: Չէ՞ որ ադրբեջանցիները բացահայտորեն ասում են. «Մենք ԼՂԻՄ-ից կարտաքսենք հայերին, իսկ հետո հերթը կհասնի նաև ռուսներին»: Ադրբեջանցիների համար հենարանը ոչ թե Մոսկվան է, այլ՝ Անկարան: Այդ մասին գրում են նաև թուրքական թերթերը: Գործը հասել է այն աստիճան հիմարության», որ թուրքական «Գունյաշ» թերթը անցյալ տարի իր էջերում հայտնել էր, որ պրեզիդենտ Գորբաչևը ազգությամբ ոչ թե ռուս է, այլ թուրք, որովհետև պաշտպանում է թուրք-ազերիներին: Բայց եկեք չկրկնենք այդ բուլվարային թերթի մեկնաբանությունները: Մեզ բոլորիս այժմ հետաքրքրում է իրադրությունը ԼՂԻՄ-ում, որը

գտնվում է եռակի շրջափակման մեջ, իսկ Կենտրոնն այդ մասին չի մտածում: Բայց չէ՞ որ դա այն երկրամասն է, որը միշտ պաշտպանել է ռուսաստանցիների շահերը՝ սկսած 13-րդ դարից, ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմների ժամանակ: Դա այն երկրամասն է, որը տվել է Խորհրդային Միության ավելի քան երկու տասնյակ հերոսներ, մարշալներ և ծովակալներ, բազմաթիվ պանծալի զինվորներ: Ինչպե՞ս կարելի է թքել ղարաբաղցիների հոգու մեջ, որոնց մեղքը միայն այն է, որ հավատալով վերակառուցմանը, ցանկություն ունեցան անձամբ որոշելու իրենց ճակատագիրը, սակայն մնացին խաբված զինծառայողների սապոգների տակ: Հայ ժողովրդի համբերության բաժակը մինչ ի բերան լցված է: Լրջորեն մտածեք, հարգելի ընկերներ և նայեցեք Ձեր շուրջը, ինչ է կատարվում ԼՂԻՄ-ում: Հավատացեք՝ աշխարհում ոչ մի տեղ այնպես ոտնահարված չեն մարդու իրավունքները, ինչպես Լեռնային Ղարաբաղում: Երկա՞ր պետք է շարունակվի այս խայտառակ իրավիճակը: Ժամանակը չէ՞ արդյոք կանգ առնել և ասել ողջ ճշմարտությունը ԼՂԻՄ-ում ազերիների կատարած վայրագությունների մասին: Ինչո՞ւ պետք է ռուս զինվորը սպանվի խաղաղ ժամանակներում ադրբեջանական գաղափարախոսների ինչ-որ ստոր նպատակների համար: Ինչո՞ւ պետք է տանջված ռուս մայրը քայլի սգո շորերով...Չէ՞ որ Դուք, Բորիս Վսեվոլոդովիչ, լավ գիտեք, թե ինչ է նշանակում որդեկորույս մոր արունքը...

Հանուն արդարության և խաղաղության վերականգնման այդ տարածաշրջանում, ես առաջարկում եմ հետևյալը.

1.Անհապաղ վերականգնել ԼՂԻՄ-ի ժողովրդի կողմից օրինական ճանապարհով ընտրված խորհրդային և կուսակցական օրգանները.

2. Ստեփանակերտից դուրս բերել ներքին զորքերի ստորաբաժանումներն ու տեղակայել մարզի շրջակայքում և այնտեղ, որտեղ ապրում է ադրբեջանցիներից և հայերից բաղկացած խառն ազգաբնակչություն.

3.Վերացնել Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոճանապարհի շրջափակումը.

4. Զինաթափել ադրբեջանական տեռորիստական զինված բանդաներն ու խմբավորումները և արտաքսել նրանց ԼՂԻՄ-ի սահ-

մաններից.

5.Հարց հարուցել երկրի պրեզիդենտի առջև՝ դուրս բերել ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից և ժամանակավորապես ենթարկել ԽՍՀՄ կենտրոնական իշխանությանը:

Մեկ այլ ճանապարհ այժմ ես չեմ տեսնում:

Ընդունեցեք երջանկության և առողջության մաղթանքով բարի ցանկություններս:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր

5.12.1990
375025, Երևան, Չարենցի 15:

14.

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Մ.Ս. ԳՈՐԲԱՉԵՎԻՆ

Հարգելի Միխայիլ Սերգեևիչ.

Ես ուշադրությամբ ծանոթացա Կենտկոմի 1990 թ. փետրվարի 5-ի պլենումում կարդացած Ձեր զեկուցման բովանդակությանը («ՍՄԿԿ ԿԿ-ի պլատֆորմի նախագիծն՝ ուղղված կուսակցության 28-րդ համագումարին»): Ինձ հաճույք պատճառեցին պլենումում Ձեր առաջ քաշած շատ հիմնարար դրույթներ: Արդարացի է, որ ժամանակն է հրաժարվել «տասնամյակների ընթացքում արմատավորված գաղափարական դոգմատիզմից, ներքին քաղաքականության մեջ իրենց դարն ապրած ստերեոտիպներից և հնացած հայացքներից»: Ցավոք, վերակառուցման ճանապարհին Կենտկոմը և կառավարությունը թույլ տվեցին «սխալներ և վրիպումներ», որոնց արդյունքում վնաս կրեց սոցիալական արդարությունը և, հետևաբար, «դեպի լավը շրջադարձ առայժմ տեղի չի ունեցել»: Միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ նաև նրանում, որ այնպիսի նեգատիվ երևույթներ, ինչպիսիք են գործադուլները, միջէթնիկական կոնֆլիկտները, կարգապահության անկումը՝ այդ ամենը բացասաբար են ազդել հասարակության նորացման գործընթացների վրա: Նման իրադրությունների ժամանակ կուսակցական և սովետական մարմիններին «չբավականացրեց վճռականությունը»:

Բնական է, Դուք չէիք կարող չշոշափել ազգամիջյան հարաբերությունների հիմնախնդիրները, քանի որ «ազգային ոլորտում գոյություն ունեն ռեալ, չհնարված իրողություններ», որոնք սպասում են իրենց անհապաղ որոշմանը «վերակառուցման ճանապարհներին»:

Խոսելով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի մասին, բնականաբար, պետք էր նկատել այն «նորը, որը ծնվել էր վերջին ժամանակներում»: Ոչ ոք չի ժխտում, որ Ադրբեջանի և Հայաստանի հակամարտության մեջ «կոնֆլիկտի կենտրոնում Լեռնային Ղարաբաղն էր», քանի որ այդ

ինքնավար մարզի տնտեսական և մշակութային զարգացման ուղղությամբ կուտակվել էին լուրջ պրոբլեմներ»: Դրանում ես Ձեզ հետ համաձայն չեմ, թե այդ երկրամասը մնացել է մաֆիայի «կոկորդում իբրև ոսկոր»: Ի՞նչ գործ ունի այստեղ մաֆիան, եթե ԼՂԻՄ-ում տեղի են ունենում իսկական ժողովրդավարական գործընթացներ՝ ծնված Ձեր իսկ հայտարարած վերակառուցումից: Եթե խոսենք մաֆիայի մասին, ապա այն գոյություն ունի ոչ միայն անդրկովկասյան հանրապետություններում, այլև երկրի մյուս տարածաշրջաններում:

Պետք է համարձակորեն խոստովանել, որ ղարաբաղյան հիմնահարցը ցույց տվեց վերակառուցողական գործընթացների բոլոր թույլ կողմերը հատկապես ազգամիջյան հարաբերություններում: Կենտրոնը թերագնահատեց բոլոր այն նեգատիվ հետևանքները, որոնք առաջ եկան այդ հարցի սխալ մոտեցումներից, չկարողացավ «ճիշտ գնահատել իրադրությունը, ըմբռնել տեղի ունեցածի իրական պատճառները և ցուցաբերել դրական ազդեցություն իրադարձությունների ընթացքի վրա»: Իմ հայացքով՝ պատճառը թաքնված է նրանում, որ քաղաքական պատասխան չտրվեց Սումգայիթին, խստորեն չպատժվեցին այն հանցագործները, որոնք արյան բաղանիս կազմակերպեցին Բաքվում: Ահա որն է գլխավոր պատճառը: Կարելի՞ էր արդյոք այս ամենից հետո «դեմոկրատական երկխոսության» գալ այն ժամանակ, երբ արդեն վաղօրոք պատրաստել էիք դեղատոմս այն մասին, որ ԼՂԻՄ-ի հարցում չպետք է լինեն «հաղթողներ և հաղթվողներ»: Իսկ հարկավոր էր այնպես անել, որպեսզի հաղթանակեր արդարությունը. «բոլոր հայերին, ադրբեջանցիներին, ռուսներին և մյուս ազգությունների մարդկանց» չհայտնեիք ցավակցություն:

Մենք վաղուց ենք մոռացել իրերը կոչել իրենց անուններով. սպանում են մարդկանց Ադրբեջանում, իսկ Կենտրոնական հեռուստատեսությունն ու մամուլը հայտնում են այն մասին, թե իբր սպանում են անդրկովկասյան հանրապետություններում: Այսպիսով՝ ակամայից պաշտպանության տակ են վերցվում քրեական հանցագործները, Ադրբեջանի ժող. ճակատի մարդասպանները: Ո՞ւմ է պետք նման «օբյեկտիվությունը», երբ զոհը և դահիճը դրվում են կշեռքի միևնույն նժարի վրա: Կամ՝ ո՞ւմ էր պետք

ԿՀ-ի պրովոկացիոն հաղորդագրությունը այն մասին, որ Հայաստանում ճնշում են քրդերին, իսկ հաջորդ օրը հերքում են տալիս՝ իբրև թե «փաստերը չեն հաստատվել»: Ո՞ւմ է պետք նյութերի նմանօրինակ էժանագին նենգափոխումը: Մամուլում հայտնում են, որ Ադրբեջանում և Հայաստանում հունվար ամսին սպանվել է շուրջ 150 մարդ: Իրականում՝ Հայաստանում նշյալ ժամանակ չի զոհվել այլ ազգության ոչ մի մարդ: Չէ՞ որ սա հատուկ մտածված ակցիա է՝ ուղղված խաղաղասեր հայ ժողովրդի դեմ: Ահա ևս մեկ թարմ օրինակ. «Իզվեստիա» թերթը (1990 թ. 6-ը փետրվարի, նո. 37) տպագրել է իր հատուկ թղթակից Ռուսլան Իգնատևի հաղորդագրությունը Բաքվից, ուր հիմնականում ճիշտ կերպով է գնահատված իրադրությունն այդ քաղաքում: Թղթակցին, հավանաբար, տանջել է խիղճը՝ ներկայացրած կիսաճշմարիտ հաղորդման համար, և հաջորդ իր թղթակցության մեջ գրել է.

«Նախորդ հաղորդման մեջ («Իզվեստիա», նո. 35) մենք հայտնել էինք արտակարգ դրության ժամանակ զինծառայողների մեջ եղած զոհերի մասին՝ չճշտելով թվերն ըստ առանձին հանրապետությունների, որը միանգամից հակազդեցություն առաջացրեց նրանցից մեկում: - Ճշտում եմ,- գրում է թղթակցության հեղինակը,-Հայաստանում զոհված զինվորներ չկան, վիրավորված են երեքը (ընդգծումը մերն է-Գր.Գր.).

Ռ. Իգնատևը պետք է իմանար, որ այդ «երեքը» վիրավորվել են Ադրբեջանի ժող.ճակատի մարդասպանների ձեռքով և ապաքինվում էին Հայաստանի հիվանդանոցներում: Համարձակություն կունենա՞ն մեր թղթակիցները գրելու Սումգայիթում, Խանլարում, Շամքորում և, վերջապես, «ինտերնացիոնալ» Բաքու քաղաքում կատարված սպանությունների ու ջարդերի իսկական կազմակերպիչների մասին: Հարկավոր է ազնվորեն և համարձակ նաև գրել ԼՂԻՄ-ի վերաբերյալ երկրի ղեկավարության կողմից ընդունված կիսատ-պռատ որոշումների մասին, և այն մասին, թե ով պետք է պատասխան տա սովետական քաղաքացիների թափված արյան համար, հայերի եղեռնի համար, Հայաստանի խայտառակ շրջափակման համար, այն էլ այս սարսափելի երկրաշարժից հետո, սովետա-իրանական սահմանը քարուքանդ անելու համար, անտուն փախստականների արցունքների համար, որոնք այժմ

թափառում են ողջ Միությունով մեկ:

Միխայիլ Սերգեևիչ.

Դուք ինչպե՞ս կարողացաք հավատալ Ադրբեջանի խղճուկ ղեկավարների հավաստիացումներին, երիցս անիծյալ խեղկատակ Վեզիրովին, որը հեռուստաալիքներով բարբառում էր, իբր թե՝ «Մոսկվան մեր ծեռքում է», գործեցեք համարձակորեն (այսինքն՝ սպանեցեք հայերին, ռուսներին և մյուս ազգություններին):

Հույս ունեմ, այժմ պարզ դարձավ, թե ուր են ձգտում Ադրբեջանի ժող.ճակատի պանթուրքականները, որոնց մոտ ԼՂԻՄ-ը «ոսկոր է կոկորդներում», իսկ Խորհրդային Հայաստանը խանգարում է նրանց սև դիտավորություններին՝ մուսուլմանական պետությունների հետ վերամիավորմանը: Ահա թե ինչու նրանք ցանկանում են տնտեսապես խեղդել Ռուսաստանին նվիրված հայ ժողովրդին: Նման իրադրության պայմաններում, ազնվորեն ասած՝ զարմացնում է Կենտրոնի դիրքորոշումը և անվճռականությունը: Ընդհակառակն՝ վերջերս ԼՂԻՄ-ի արտակարգ դրության պարետ, գեներալ Վլադիսլավ Նիկոլաևիչ Սաֆոնովի հրամանով կուսակցության մարզկոմի դատարկ շենքի վրա՝ ատրճանակների փողերի տակ բարձրացվել է Ադրբեջանի դրոշակը, որը գիշեր ու ցերեկ պահպանվում է զինվորական կարգախմբի և երկու սպաների կողմից: Ասացեք ազնվորեն, չափից ավելի ջանք չի՞ գործադրել հիշյալ գեներալն իր պարտականությունները կատարելիս նման շիկացած իրադրության ժամանակ, երբ Ստեփանակերտում ապրում են միայն հայեր և ռուսներ, և չկա ոչ մի ադրբեջանցի: Կարծում եմ՝ Դուք և գեներալիտետը պարետին չեք տվել այդպիսի լիազորություններ կամ հանձնարարականներ: Թող ընկ. Սաֆոնովն առաջին հերթին պայքարի եթերի և ռադիոհաղորդումների ադրբեջանական ավազակների դեմ Շուշիում, թող ի հայտ բերի հայ ճարտարապետության պատմական հուշարձանները կործանողներին, փառապանծ գեներալների ու մարշալների, հայ ազգության զինվորների՝ Խորհրդային Միության հերոսների հուշակոթողները ոչնչացնողներին: Եվ այս ամենից հետո, Միխայիլ Սերգեևիչ, դեկլարատիվ են հնչում Ձեր խոսքերը.

«Որպեսզի ավելի շուտ լուծվեն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցերը (բոլոր դեպքերում անհետաձգելիները, առաջնակարգները) և այն պրոբլեմները, որոնք ծագել են նրա շուրջ, պետք է լուծել սահմանադրական սկզբունքների պարտադիր պահպանմամբ, ներառյալ Ադրբեջանի ամբողջականությունը»: Ձեր ծնակերպման մեջ, թույլ տվեք նկատել, ոչինչ նոր բան չկա: Նույն դոգմատիկ մոտեցումն է ԼՂԻՄ-ի հարցի «լուծման» կապակցությամբ: Ես կարծում էի, թե Բաքվի վերջին ջարդերից հետո Դուք կփոխեք Ձեր դիրքորոշումը: Պարզվեց, որ սխալվել եմ: Ժամանակակից պայմաններում ոչ մի երաշխիք չկա, որ ԼՂԻՄ-ը թողնելով Ադրբեջանի կազմում, չի շարունակվելու հանրապետական իշխանությունների սանձարձակ արարքները, չեն կրկնվելու Սումգայիթն ու Բաքուն: Պետք է իրատես լինել: Մենք, չգիտես թե ինչու, մոռացել ենք Վ.Ի.Լենինի կողմից հռչակված՝ ժողովուրդների ինքնորոշման հիմնարար «սահմանադրական սկզբունքը»: Վերակառուցումը, սիրում եք Դուք ամեն անգամ կրկնել, չի նշանակում սահմանների վերածնում: Իսկ ինչպե՞ս վարվել, եթե հարևան հանրապետությունում վերակառուցման տակ հասկանում են կրակոցներ խաղաղ բնակիչների մեջ, կրակոցներ խորհրդային տերության սրբազան սահմանների վրա...

Հայաստանի կոմկուսի փետրվարյան պլենումի ժամանակ Կենտկոմի 1-ին քարտուղար Ս.Գ. Հարությունյանն առաջարկեց ԼՂԻՄ-ի հիմնահարցը լուծելու փոխզիջումային տարբերակ. նկատի ունենալով տարածաշրջանի պայթունավտանգ իրադրությունը, երկու հանրապետությունների սահմանամերձ շրջաններում հետագա գործողությունների ծավալումից խուսափելու նպատակով ԼՂԻՄ-ը ժամանակավորապես դուրս բերել Ադրբ. ԽՍՀ-ի կազմից: Նկատի ունեցեք, դա շատ մեծ զիջում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կողմից, որոնք անցյալ տարի՝ դեկտեմբերի 1-ին որոշում հռչակեցին հայ ժողովրդի երկու մասերի վերամիավորման մասին: Ս.Գ.Հարությունյանի առաջարկությունը ներկա պայմաններում միակ ճիշտ որոշումն է, և, հույս ունենք, Գերագույն խորհրդի 3-րդ նստաշրջանի ժամանակ Դուք կաջակցեք այդ որոշման ընդունմանը: ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում՝ այդ նշանակում է նոր Նախիջևան, սոցիալիստական պետության մեջ նոր եղեռն:

Անհրաժեշտ է ապաշրջափակել Հայաստանը, անհրաժեշտ է կասեցնել Բաքու- Անկարա օդային կամուրջը: Ժողովրդի մեջ լուրեր են տարածվել, որ Ադրբեջանի ժող. ճակատը կանոնավոր կերպով արտասահմանյան արտադրության զենք է ներկրում:

Եթե այսօր անհրաժեշտ միջոցներ չձեռնարկվեն, վաղն արդեն շատ ուշ կլինի:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
ՍՄԿԿ անդամ, պատմագիտության դոկտոր

12.12. 1990
Հասցես՝ Երևան, Չարենցի փող. 15:

15.

ԽՍՀՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ Ա. ՋԱՅՑԵՎԻՆ

Պատճենը՝ ՏԱՍՍ-Ի ԹՂԹԱԿԻՑ Վ. ԳՈՆԴՈՒՍՈՎԻՆ

Հարգելի ընկ. գեներալ.

Խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. Արտասահմանից որքա՞ն զենք է ներկրվել Ադրբեջան սովետա-իրանական սահմանի ապամոնտաժման և քարուքանդ անելու հետևանքով.

2. Որքա՞ն միավոր հրազեն այժմ կա Ադրբեջանի տեռորիստների ձեռքին և որքանն է հանձնված ներքին զորքերին և բանակին:

3. Որքա՞ն սովետական զինվորներ են զոհվել Ադրբեջանում, մասնավորապես, Բաքվի ջարդերի ժամանակ:

Ուզում եմ չկասկածել, որ Ձեզնից կստանամ (հնարավոր է՝ զանգվածային լրատվության միջոցներով) անաչառ տվյալներ, որոնք հուզում են սովետական բոլոր քաղաքացիներին:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր

27.9.1990
Հասցես՝ 375025, Երևան, Չարենցի փող. 15:

16.

ՄՈՍԿՎԱ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԽՍՀՄ ՆԳՄ ՄԱՄՈՒԼԻ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿ. Վ.Ա. ՅԱՆՉԵՆԿՈՎԻՆ

Մեծարգո ընկեր.

Կենտրոնական հեռուստատեսությամբ շարունակվում են ոչ ճիշտ, երբեմն սադրիչ հաղորդումներ Հայաստանի և Ադրբեջանի սահմանամերձ շրջանների իրադրության մասին: Մութալիբովն ու նրա օպրիչնիկները հանձինս Վ.Պոլյանիչկոյի և Վ.Սաֆոնովի, թույլ են տալիս սանձարձակ արարքներ, իսկ մեղադրվում է հայկական կողմը: Չէ՞ որ Դուք գիտեք, որ Ադրբեջանի ղեկավարությունը ձգտում է ինչ գնով էլ լինի՝ ռուս զինվորների ձեռքերով սեպ խրել Ռուսաստանի և Հայաստանի քրիստոնյա ժողովուրդների միջև: Մինչև ե՞րբ պետք է աղավաղենք փաստերը և խաղանք անազնիվ դատավորի դեր: Ասացեք, ինչի՞ համար պետք է զոհվի երիտասարդ ռուս զինվորը պանթուրքիստ-ադրբեջանական մարդասպանների ձեռքով: Ժամանակը չէ՞ իրերը կոչել իրենց իսկական անուններով:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան, ՍՄԿԿ անդամ
Պատմական գիտությունների դոկտոր

14.12. 1990
Հասցես՝ 375025, Երևան, Չարենցի փող. 15:

17.

«ՇՉԻՏ Ի ՄԵՉ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԸՆԿ. Ա.Գ. ՉԵՌՆԵՆԿՈՅԻՆ

Պատճենը՝ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻՆ

Հարգելի գլխավոր խմբագիր.

Ձեր թերթում (սեպտեմբերի 7, նո. 21) տպագրված են վիճակագրական տվյալներ ԽՍՀՄ-ում առաջին կիսամյակում կատարված հանցագործությունների մասին: Հաղորդվում է, որ «հանցագործությունների աճ կա բոլոր միութենական հանրապետություններում, բացի Ադրբեջանական ԽՍՀ-ից»: Ես կարող էի Ձեզ հետ համաձայնել, եթե Դուք պատասխանեիք հետևյալ հարցերին.

1.«Կիսամյակի ամփոփագրում» ներկայացվե՞լ են արդյոք Բաքվում և Ադրբ. ԽՍՀ-ի այլ վայրերում 1990թ. հունվարին տեղի ունեցած ջարդերի մասին տվյալները:

2. Համարո՞ւմ եք Դուք հանցագործություն Հայաստանի շրջափակումը (երկաթուղային, ավտոճանապարհային և այլն), որի հետևանքով հանրապետությունը կրել է մի քանի միլիարդ ռուբլիների վնաս, այն էլ այս սարսափելի երկրաշարժից հետո:

3.Դուք համարո՞ւմ եք հանցագործություն այն փաստը, որ մինչև այսօր փակված է Ադրբեջանի տարածքից Հայաստան ներմուծվող գազը:

4.Հանցագործություն համարո՞ւմ եք Ադրբեջանի ժող. ճակատի մարդասպանների վայրագությունները Հայաստանի և Ադրբեջանի սահմաններում: Ինչո՞ւ մինչև օրս Ադրբեջանի ժող. ճակատի զինվորները ենթարկվում են ոչ թե Բակատինին, այլ Ադրբեջանի պարագլուխներին, որի հետևանքով մեր երիտասարդ զինվորները ականայից դառնում են

իրենց գործիչների օպրիչնիկները, օրինակի համար ԼՂԻՄ-ը, ուր մինչև օրս գոյություն չունի սովետական իշխանություն: Չէ՞ որ Ձեր թերթը կրում է «Մեր սովետական հայրենիքի համար» խորագիրը:

Ինձ թվում է, ադրբեջանական տեռորիստների նկատմամբ գործում է միայն Վահանը, իսկ հարկավոր էր , որ գործեր նաև Սուրը (մեչը):

Հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Հայկ.ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

27. 9. 1990
Հասցես՝ 375025, Երևան, Չարենցի փող. 15:

18.

«ԻԶՎԵՍՏԻԱ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ «ԱՐԳՈՒՄԵՆՏԻ Ի ՖԱԿՏԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1990թ. սեպտեմբերի 27-ի «Իզվեստիա» թերթի համարում (նո. 269) «Ո՞ւր է հանձնվում զենքը» խորագրի տակ տպագրվել է ՏԱՍՍ-ի թղթակից Վ. Գոնդուսովի հարցազրույցը ԽՍՀՄ ՆԳՆ գլխավոր վարչության պետի տեղակալ գեներալ-մայոր Ա. Զայցևի հետ:

Մի կողմ թողնենք, որ այդ հաղորդագրությունը հիմնված է չստուգված փաստերի վրա, լոկ նշենք, որ այն ունի սադրիչ բնույթ և նպատակ է հետապնդում ապակայունացնել նորմալ իրադրությունը Հայաստանում: Նման հոդվածի նպատակը պարզից էլ պարզ է. վարկաբեկել հանրապետության նոր ղեկավարությանը և անձամբ խորհրդարանի նախագահ, կոմկուսակցության առաջնորդներին ընտրությունների ժամանակ հաղթած Լևոն Տեր-Պետրոսյանին: Իմ կարծիքով՝ դա ստոր խաղ է: Գուցե հարգելի գեներալն ակնարկում է կազմակերպվելիք նոր պրովոկացիայի մասին, բայց այս անգամ նա բացահայտորեն սխալվել է: Իսկ ահա գեներալ Զայցևը թող պատասխանի ընթերցողներին հետևյալ հարցերին.

1.Որքա՞ն զենք է ներկրվել Ադրբեջան սովետա-իրանական ավելի քան 700 կմ երկարությամբ սահմանը քարուքանդ անելու և ջարդերի ժամանակ:

2. Որքա՞ն միավոր հրազեն է այժմ կուտակվել Ադրբեջանի Ժող.ճակատի ահաբեկիչների ձեռքին և ո՞ւր է այն հանձնվում, եթե, իհարկե, հանձնվում է:

3. Որքա՞ն սովետական զինվորներ են զոհվել Ադրբեջանում, մասնավորապես, Բաքվի ջարդերի ժամանակ:

Խնդրում եմ այս հարցերի պատասխանները տպագրել մամուլում:

Սեզ հետաքրքրող հարցերի տվյալները հրապարակելուց հետո ես կհավատամ, որ սովետական մամուլն ու ՆԳՆ-ի ղեկավարությունը ազնվորեն ծառայում են ժողովրդին:

Հարգանքով՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

25.12. 1990
375025, Երևան, Չարենցի փող. 15:

19.

«ԻԶՎԵՍՏԻԱ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԸՆԿ. Ն. ԵՖԻՄՈՎԻՆ ԿԻԵՎ, ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ԽՍՀ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՆ ՄՈՍԿՎԱ», ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՍԱՄՈՒԻԼԻ ԿԵՆՏՐՈՆ

Հարգելի ընկերներ.

Շնորհավոր Նոր տարի: Բոլորի կողմից սիրված «Իզվեստիա» թերթը 1991 թ. առաջին իսկ համարից դարձյալ վշտացրեց Հայաստանի իր բաժանորդներին՝ հրապարակելով Ն.Բուրբիգայի՝ իր բովանդակությամբ պրովոկացիոն հոդվածը մեր հանրապետության մասին: Ակներևաբար, Անդրկովկաս անվան տակ այդ վայ-լրագրողը հասկանում է միայն Հայաստանը, որտեղ իբրև թե անցյալ տարի «կատարվել է ավելի քան 120 հարձակում բանակային կետերի, պահեստների, ստորաբաժանումների վրա...», իսկ փոխգնդապետ Ն.Մեդվեդևը, այ քեզ բան, զգուշացնում է ուկրաինական երիտասարդներին, որ նրանք աչալուրջ լինեն, որպեսզի «չստանան վերքեր էքստրեմիստների գնդակներից»: Ամոթ է, զզվելի է և ստորություն է: Կարո՞ղ է այդ դուետը անուն առ անուն ցույց տալ գոնե մի ուկրաինացու, որը զոհվել է հայկական հողում՝ հանրապետության պաշտպանների ձեռքով: Ոչ և ոչ: Հայաստանը Բաքու չէ, Սումգայիթ չէ և Կիրովաբադ չէ, որտեղ մինչև ատամները զինված ադրբեջանական ազգայնամոլների բանդաներն անգթորեն սպանում էին ոչ միայն ուկրաինացիներին, այլև բելոռուսներին, մոլդովացիներին և մյուս ազգություններին: Այդ մասին, չգիտես ինչու, ծախված մամուլը լռում է, որովհետև երկրի ղեկավարության համար ամոթ է: Ինչ արած՝ հիշելով հայ «բոևիկներին», նրանք «մոռանում են» սովետա-իրանական սահմանը քարուքանդ անողներին, սովետական սահմանապահների կանանց բռնաբարող ադրբեջանական սրիկաներին, փախստական-

ներին, Ադրբեջան ներկրված արտասահմանյան զենքի մասին: Իսկ ինչպես շատ շուտով «մոռացան» այն բազմաթիվ մարդասիրական գործողությունների մասին, երբ ադրբեջանցիների կողմից վիրավորված զինվորներն ու սպաները բուժվում էին Երևանի հիվանդանոցներում, ինչպես ԼՂԻՄ-ում ծառայող ուկրաինացի տղաները, տեսնելով ադրբեջանական իշխանությունների անարդար վերաբերմունքը, Հայաստանի վրայով փախչում էին դեպի իրենց երկրներ...Այդ մասին հրամայված չէ՞ գրել:

Թանկագին ուկրաինացի տղաներ, մի հավատացեք պրովոկատորներին: Հայաստանի քրիստոնյա ժողովուրդը սիրում է ձեզ: Եկեք մեզ մոտ, ծառայեցեք հանգիստ և խաղաղ: Հայերից ոչ մեկը ձեռք չի բարձրացնի ձեզ վրա: Այդ ադրբեջանական մարդասպաններն ու վախկոտներն են, որոնք իրենց ծախված գրչակների միջոցով ձգտում են սեպ խրել Միության քրիստոնյա ժողովուրդների միջև: Խնդրում եմ ձեզ, մի լսեք ամեն տիպի պրովոկատորներին, որոնք մեր ժողովուրդների թշնամիներն են:

Կեցցե հայ-ուկրաինական ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Հայ-ուկրաինական միացյալ
վիմագրագիտական արշավախմբի ղեկավար
Պատմական գիտությունների դոկտոր

5.1.1991
375025, Երևան, Չարենցի 15:

20.

ՄՈՍԿՎԱ, ՌՍՖՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ, ԸՆԿ. Բ.Ն. ԵԼՑԻՆԻՆ

Հարգելի Բորիս Նիկոլաևիչ.

Գեներալ Տարասովը և մեկ ուրիշ պատգամավոր համագումարի ժամանակ իրենց պրովոկացիոն ելույթներով գրգռում են Հայաստանի և Վրաստանի հեռուստադիտողներին: Թող հարգելի գեներալը ավելի լավ է պատմի այն մասին, թե՝ ո՞վ և ի՞նչ եղանակով քարուքանդ արեց խորհրդային սահմանները Ադրբեջանում, ո՞վ կազմակերպեց հայերի կոտորածը Սումգայիթում, ո՞վ սպանեց ռուսներին Բաքվում, ո՞վ է շրջափակման մեջ պահում Հայաստանը, թող նա պատասխանի ԼՂԻՄ-ում արտակարգ դրության պարետ, գեներալ Սաֆոնովի՝ ինքնավար մարզի հայ ազգաբնակչության նկատմամբ թույլ տված սանձարձակ արարքի մասին: Հակառակ Միության թուրքամետ գաղափարախոսների ցանկությանը, Հայաստանի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի քրիստոնյա ժողովուրդը եղել է, կա և մշտապես կմնա Ռուսաստանի հետ: ԽՍՀՄ պրեզիդենտի չմտածված, ըստ էության ադրբեջանամետ կիսատ-պռատ որոշումներն ավելի են սրում տարածաշրջանի քաղաքական իրադրությունը: Կենտրոնական իշխանությունների և անձամբ Գորբաչևի թողտվության և խրախուսման հետևանքով հեղվում է գոյության տարրական իրավունքներից զուրկ անմեղ մարդկանց արյունը և դա այն պատճառով, որ նրանք ռուսասեր են և քրիստոնյա: Մինչև ե՞րբ պիտի խոսենք ժողովուրդների ինքնորոշման մասին և խեղդենք դեմոկրատիան ներքին զորքերի զինվորների սապոգների տակ: ԼՂԻՄ-ի ժողովուրդը, որի 80 տոկոսը հայեր են, ցանկանում է վերամիավորվել Հայաստանի հետ, և ոչ՝ Թուրքիայի, ուր ձգտում է Ադրբեջանը:

Թախանձագին խնդրում ենք Ձեզ, Ռուսաստանյան Ֆեդերացիայի

պառլամենտականների հետ աջակցեք ղարաբաղյան հիմնահարցի շուտափույթ լուծմանը:

Հայաստանի մի խումբ գիտնականների անունից՝
հարգանքով՝ Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

18.1. 1991
375025, Երևան, Չարենցի փող. 15, Հայկ. ԽՍՀ
ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

24.
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ Ի.Լ. ԱՆԴՐԵԵՎԱՅԻՆ

Հարգելի ժողովրդական պատգամավոր:

«Իզվեստիա» թերթ[illegible] (1991 թ. 23-հունվարի ՝ՆՈ 121) ես կարդացի մի խումբ ժողովրդական պ[illegible]տգամավորների նամակը, որտեղ մասնավորապես, ասվում է. «...Մեն[illegible] [illegible] կանգնած ենք ցանկացած ազգության քաղաք[illegible]ների իրավունքների, կրոնական և քաղաքական համոզմունքների պ[illegible]շտպանության դիրքերում»: Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է նաև «ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների «Համաձայնություն» («Սոգլասիե») միավորված խմբերի Դիմում. «...ազգությունների ինքնորոշ[illegible] [illegible] համաձայն ժողովրդի կամքի...» և այլն: Մարդասիրակ[illegible] [illegible]: Այնուհետև Դուք կատարյալ արդարացի կերպով հայտա[illegible] [illegible] միաժամանակ (՞) մի կողմ նետենք տարածայնությու[illegible] [illegible]անական ջանքերով ձգտենք դուրս բերել երկիրը փակու[illegible]ղից: Ես Ձեզ հետ լրիվ համերաշխ եմ, վաղուց էր պետք այդպես: Իսկ [illegible] մեծ ուշացումով, երբ թափվում է անմեղ մարդկանց [illegible]: Ինչո՞ւ Դուք, իբրև ժողովրդական պատգամավոր, երկրի պրե[illegible] չեք ասում «Բավական է, Միխայիլ Սերգեևիչ, արյունահեղու[illegible] բավական է վարկաբեկեք Միությունը Ձեր չմտածված գործողությ[illegible]երով, կիսատ-պռատ որոշումներով, բավական է միակողմանի քաղաքականություն վարեք ազգամիջյան հարցերում»: Դուք ինչո՞ւ Գերագույն խորհրդի նախագահ Ա. Լուկյանովին չեք ասում. «Ի՞նչ եք Դուք ուզում հայ ժողովրդից՝ Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի...եղեռնից հետո: Ինչո՞ւ է Լեռնային Ղարաբաղի բնիկ ժողովուրդը տեղահանվում ՆԳՄ զորքերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի համատեղ ջանքերով: Ինչո՞ւ Դուք աջակցեցիք Մութալիբովին՝ կոմունիստական կուստոմսով Անկարայի գաղափարախոսին:

Կենտրոնական հեռուստատեսությունից գիտեմ, որ Դուք, ընկ. Անդրեևա, համարձակ և արդարամիտ կին եք: Մի՞թե Դուք վախեցաք դատապարտել Պուգոյի և Յազովի գործողությունները, գեներալ Շատալինի՝ ԼՂԻՄ-ում ամոթալի վաքխանալիաներ կազմակերպած գլխավոր հերոսին: Ո՞վ էր «Կոլցո» արյունոտ օպերացիայի հեղինակը, երբ ժամանակակից ռազմական տեխնիկայի գործադրմամբ Ադրբեջանի 24 հայկական գյուղերից բռնի արտաքսեցին մի ամբողջ ժողովուրդ: Պրեզիդենտն իր կնոջ հետ միասին շրջագայում է աշխարհով մեկ, իսկ Կովկասում կործանվում է ժողովուրդը, և Կենտրոնը լռում է: Հայաստան են գալիս նոր, խոշտանգված փախստականների հեղեղներ, Գորբաչևը Խաղաղության Նոբելյան մրցանակ է ստանում: Չէ՞ որ դա անբարոյականություն է: Նա գոնե մեկ անգամ պետք է գար ԼՂԻՄ և իր աչքերով տեսներ Մութալիբով-Պոլյանիչկո հանցախմբի վանդալիզմը. կործանված գյուղեր, սպանված ծերեր ու երեխաներ, բռնաբարված կանայք, քանդված տներ, ծեծված ու ջարդված պատանդներ...Ահա Կենտրոնի անհեռատես քաղաքականության արդյունքը: Ընդ որում, զինաթափվում է միայն հայկական կողմը, իսկ ադրբեջանական բանդիտական խմբերն ազատորեն շրջում են ավտոմատները ձեռքներին: Մի՞թե սա արդարացի է: Սա պարզապես ստորություն է: Կենտրոնը պետք է անհապաղ փոխի իր քաղաքականությունը և տակտիկան: Գորբաչևը պարտավոր է ներողություն խնդրել հայ ժողովրդից: Այդպես չեն պահպանում սուվերեն հանրապետությունների Միությունը: Իսկ ինչո՞ւ Հայաստանը չի ստորագրում Միութենական պայմանագիրը. որովհետև Կենտրոնը չդատապարտեց հայերի եղեռնը Ադրբեջանում: Եթե Դուք ծանոթ եք պատմությանը, ապա պետք է իմանաք, որ Հայաստանը մշտապես եղել է Ռուսաստանի հետ: Նա ռուսաստանցիների հարավի առաջավոր պահակակետն է: Եվ ես անձամբ դրանով հպարտանում եմ: Իսկ այժմ, ինչպես տեսնում եք, բանակը ադրբեջանական ղեկավարության հանձնարարությամբ ոչնչացնում է քրիստոնյա ժողովրդին, ռուսների ձեռքով սպանում է իր հավատակիցներին: Դա այն ժողովուրդն է, որի դուստրը ծնեց ռուսների համար մեծ զորավար Սուվորովին:

Ուղարկում եմ Ձեզ մարդասպանների և սպանվածների, ինչպես նաև Գետաշեն գյուղից բռնագաղթված վերջին հայ «էքստրեմիստուհու» լուսանկարները:

Անկեղծորեն՝
Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
7.6.1991
375025, Երևան, Չարենցի փող. 15:

Գ. 22.

«ՌՈՍԻՅՍԿԱՅԱ ՏՐԻԲՈՒՆԱ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԸՆԿ. Ա. ՅՈՒՐԿՈՎԻՆ

Մեծարգո՛ ընկեր

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Գորբաչևին՝ բազմագիտակ, սկզբունքային և նպատակասլաց մարդուն: Բայց նա իր դիրքերը հանձնել է, և ես դադարեցի նրան հարգել, որովհետև սումգայիթյան ջարդերից հետո նա նույնիսկ չբարեհաճեց ցավակցություն հայտնել զոհվածների ընտանիքներին: Բայց չէ՞ որ այնտեղ սպանվել էին հարյուրավոր մարդիկ և ոչ 32 կամ 36, ինչպես ոչ ճիշտ կերպով հայտնվում է զանգվածային լրատվության միջոցներով: Բաքվում մեկ տարի առաջ տեղի ունեցած կոտորածների ժամանակ զոհվել են հիմնականում դարձյալ հայերը: ԽՍՀՄ պրեզիդենտը ցավակցություն է հայտնում Ադրբեջանի ղեկավարությանը, այսինքն՝ հայերի, ռուսների, հրեաների և մյուս ազգությունների եղեռնի իսկական կազմակերպչին: Արդյոք սա հսկայական պետության ղեկավարի նորմա՞լ վարմունքն է: Իհարկե, ոչ: Այժմ Ադրբեջանի մարդասպանները ձգտում են սեպ խրել Հայաստանի և Ռուսաստանի ժողովուրդների միջև: Բայց այդ նրանք երբեք չեն տեսնի, որովհետև հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը անցել է դարերի փորձությամբ: Այդ բարեկամությամբ հպարտանում էին հատկապես Պետրոս Մեծը, Եկատերինա Երկրորդը, հայուհու զավակ Ա. Սուվորովը և փառապանծ բազմաթիվ հրամանատարներ ու անցյալի քաղաքական գործիչներ:

Երբեմն պետք է թերթել պատմության էջերը: Չէ՞ որ պատմությունը ժողովրդի հիշողությունն է, գալիք օրերի կողմնորոշիչը: Պետք է մոռանանք, որպեսզի ապագայում չսխալվենք:

Հարգանքով՝

Գրիգոր Մեսրոպի Գրիգորյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

26.2. 1991

375025, Երևան, Չարենցի 15:

23.

«ՌԱԲՈՉԱՅԱ ՏՐԻԲՈՒՆԱ» ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ ԸՆԿ. Ա. ՅՈՒՐԿՈՎԻՆ ՊԱՏՃԵՆԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՌԱԴԻՈՅԻՆ

Հարգելի գլխավոր խմբագիր.

Ձեր թերթում (1991, 6-ը հունիսի, ևո. 111) կարդացի ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի 2-րդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոյի «Կասպին կանչում է օգնության» վերնագրով տպագրված պատգամավորական հարցապնդումը: Նրա անձնական կարծիքով՝ «Կասպիին մահացու վտանգ է սպառնում մայր-Վոլգան»: Միանգամից ասեմ՝ դա զրպարտություն է: Կասպից ծովն աղտոտում են առաջին հերթին Ադրբեջանի քիմիական և այլ գործարանները, և ոչ թե մայր-Վոլգան: Պոլյանիչկոն, իբրև պատմաբան, այդ մասին պարտավոր էր իմանալ: Մենք ողջունում ենք, որ Նաջիբուլայի նախկին խորհրդականը փորձում է իր գիտելիքները նաև էկոլոգիայի բնագավառում, գուցե Կասպից ծովի ջրերով նա կլվանա հանցագործ-դահճի իր արյունոտ ձեռքերը: Նա մեղավոր է Աֆղանստանում և ԼՂԻՄ-ում սովետական զինվորների մահվան համար: Այժմ, լինելով պանթուրքական Մութալիբովի ծառան, նա ձգտում է արտաքսել հայությունը Լեռնային Ղարաբաղից, խոշտանգելով մանուկներին ու ծերերին, սպանելով խաղաղ բնակիչներին իր՝ մինչև ատամները զինված օպրիչնիկներով: Խորհրդային ժողովուրդն այս մասին պետք է իմանա: Ինչպե՞ս կարելի է մեր ժամանակներում ավտոմատների փողերի տակ ստիպել Ադրբեջանի և ԼՂԻՄ-ի հայկական գյուղերի բնակիչներին «կամավոր կերպով» թողնել հայրենի օջախները և հեռանալ անհայտ ուղղությամբ, չգիտես թե ուր: Մի՞թե ռուս մարդը ինչ-որ ողորմաբաժնի համար կարող էր իր հոգին վաճառել ստոր մարդասպաններին՝ ժողովուրդների եղեռնի կազմակերպիչներին: Պոլյանիչկոն ԼՂԻՄ-ում կիրառում է պատժիչ գործողությունների նույն աֆղանական մեթոդը: Դա խայտառակություն է:

